

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ФИЛОСОФИИ, ПРАВА И СОЦИОЛОГИИ

САРГИС БЕРИАЦИ

**О ВСЕЛЕННОЙ
И ОБ ИНЫХ ЧАСТНЫХ
ВЕЩАХ**

Публикация текста,
предисловие и примечания

С. С. АРЕВШАТЯНА

Ереван – 2011 г.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻՆ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱՐԳԻՍ ԲԵՐԻԱՅԻ

**ՅԱՂԱԳՍ ԱՇԽԱՐՀԻ
ԵՒ ԱՅԼ ՄԱՍՆԱԻՈՐ ԻՐԱՑ**

Բնագրի հրապարակումը,
ատաղաբանը և ծանոթագրությունները

Ս. Ս. ԱՐԵՎՇԱՏՅԱՆԻ

Երևան – 2011 թ.

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ

Փիլիսոփայության, իրավունքի և սոցիոլոգիայի ինստիտուտի
Գիտական խորհրդի որոշմամբ

Սարգիս Բերիացի

Յաղագս աշխարհի և այլ մասնատու իրաց: Բնագրի հրատարակումը, առաջաբանը և ծանոթագրությունները Ս. Ս. Արևշատյանի.– Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 2011 թ.,

Առաջին անգամ հրատարակվող 17-րդ դարի մտածող Սարգիս Բերիացու «Յաղագս աշխարի» փիլիսոփայական երկը լրացնում է ժամանակի հայ իմաստասիրական մտքի պատմության անհայտ էջը: Այն արժեքավոր է տիեզերաբանական, ինչպես նաև հոգեբանական հայացքների ուսումնասիրման տեսակետից:

Հասցեագրված է փիլիսոփայության և առհասարակ գիտական մտքի պատմությամբ զբաղվող մասնագետներին:

© ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության ինստիտուտ

© Ս. Արևշատյան, 2011 թ.

ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱ ԲԵՐԻԱՑՈՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԿԸ

Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրաց հավաքածուն պահպանել է փիլիսոփայական մի բնագիր (հմր. 2361, էջ 240ա-259բ), որը վրիպել է հայ փիլիսոփայական մտքի պատմությանը զբաղվող մասնագետների ուշադրությունից: Միակ օրինակով մեզ հասած այդ բնագիրը մեր առջև բացում է 17-րդ դարի անհայտ իմաստասերի թողած ժառանգության ուշագրավ մի էջ, որը եղել է ժամանակի պայծառ դեմքերից մեկը:

Աշխատության վերնագրում հեղինակը համետորեն նշում է, որ այս երկը գրված է «Ի Սարգսէ ումեմնէ, պիտակ անուամբ քահանայէ», և որ նրա նպատակը եղել է ամփոփել փիլիսոփայական գրականությունը «սակս վարժման անձին իւրոյ» (240ա):

Սակայն, ինչպես ցույց է տալիս բնագրի վերլուծությունը, այն բացում է ընթերցողի առջև հեղինակի լայն մտահորիզոնը, քաջածանոթությունը ոչ միայն մինչև 17-րդ դարի կեսերը կուտակված անտիկ շրջանի և միջնադարյան փիլիսոփայության ներկայացուցիչների թողած ժառանգությունը: Աշխատության տասներեք գլուխներում շարադրված

են հեղինակի տիեզերաբանական հայացքները: Հատուկ ուշադրություն արժանի են հոգեբանությունը (հին առումով) նվիրված վերջին գլուխներում:

Սարգիս Բերիացին (1592-1662 թթ.) ծնվել, ստեղծագործել և կյանքն ավարտել է Հալեպ քաղաքում (հին անվանումն է Բերիա):

Սարգիս Բերիացու, որպես ժամանակի մտավորականի մասին ուշագրավ տեղեկություններ է հայտնում իր ժամանակակից, պետք է ասել՝ հասակակից Առաքել Դավրիժեցին, 17-րդ դարի անվանի պատմիչը և եկեղեցիական գործիչը: Նրանք լավ ծանոթ են եղել, մի քանի անգամ հանդիպել և համագործակցել են էջմիածնում և Հալեպում:

Ինչպես գրում է Առաքել պատմագիրը, Սարգիս Բերիացին հայտնի էր ժամանակակիցներին որպես բազմակողմանի գիտելիքների տեր անձնավորություն, մի քանի արևելյան և արևմտյան լեզուներ իմացող լայնախոհ գիտնական, ակնագործ և բժշկապետ:

«Այժմու ժամանակին ժամանեալ,— գրում է Առաքել Դավրիժեցին,— ոմն քահանայ Սարգիս անուամբ ի մերս ազգէ, հմուտ և տեղեակ բանից Գրոց, որ բնակեալ էր ի քաղաքն Բերիայ, որ այժմ ասի Հալապ: Եւ էր կարի վարժ ի լեզուն արապի և օսմանցույ և ֆռանկին, այլև ծանօթ հոռոմի լեզուին և ջհտի»¹:

¹ Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի, Դր. 1990, էջ 448:

Մարգիս քահանան թողել է մի շարք աշխատություններ տարբեր բովանդակությամբ՝ բժշկարան (հեքիմարան), թանկագին քարերի մասին արժեքավոր աշխատություն, որն Առաքել Դավրիժեցին գետեղել է իր «Պատմության» մեջ², եղել է հմուտ վարպետ «ակնագործ, որ պատուական ակունս հարթէ և շինէ, այլ և գնող և վաճառող սոցին»³: Գրել է նաև տաղեր և հարստացրել 17-րդ դարի գեղարվեստական գրականությունը ուշագրավ գործերով⁴: Այս բազմաշնորհ, լեզվագետ («և կարդացող հինգ լեզուէ»), հանրագիտակ հեղինակը, ինչպես գրում է հալեպահայության պատմագիր Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմեյանը, թողել է նաև մեզ հետաքրքրող փիլիսոփայական աշխատությունը⁵: Մարգիս քահանան, կամ Մուրատ Մարգիս Բերիացին, ինչպես մեզնից առաջ կռահել է արք. Ա. Սուրմեյանը, հենց այն հեղինակն է, «պիտակ անվամբ քահանա Մարգիսն է», որի երկը պահպանվել է միակ օրինակով Մատենադարանի ձեռագրում⁶:

² Նույն տեղում, էջ 449-456: Այս երկը ուսերեն քարգմանությամբ «Драгоценные камни» հրատարակել է Ք. Պատկանյանը, СПб., 1873, Ռուսաստանի Գիտությունների կայսերական ակադեմիայի հանձնարարությամբ:

³ Նույն տեղում, էջ 448:

⁴ Տե՛ս Ա. արք. Սյուրմեյան, Պատմություն Հալեպի հայոց, հ. III, Փարիզ, 1950, էջ 429-431:

⁵ Նույն տեղում, էջ 462:

⁶ Նույն տեղում:

Այս ձեռագիրը նշված է «Փիլիսոփայական աշխատությունները Մատենադարանի հայերեն ձեռագրերում (համառոտ մատենագիտական ուղեցույց)»-ում⁷: Կազմողները գրում են, որ «կենսագրական տեղեկություններ չկան», սակայն վերնագրի տակ նշում են (XVI դար), իսկ ձեռագրի տվյալները գրանցում են 1679 թ., ելնելով հիշատակարանի տվյալից⁸: Պարզ է, որ ձեռագիրը 17-րդ դարի է և ոչ թե 16-րդ: Սարգիս քահանան, ինչպես պարզել է արք. Ա. Սուրմեյանը, հենվելով տապանաքարի վրա արձանագրված տվյալների վրա մահացել է 1662 թ.: Որդիները, որոնք իրենց հոր՝ Սարգիս քահանայի մասին հաղորդում են նույն տվյալները, ինչ որ նրա մասին գրում է Առաքել Դավրիժեցին, ավելացնելով, որ նա մոտ յոթանասուն տարիների էր: Դրանից ելնելով արք. Սյուրմեյանը նշում է, որ Սարգիս քահանան ծնվել է Հալեպում մոտ 1592 թվականին⁹ և մահացել մոտավորապես վաթսունհինգ-յոթանասուն տարեկանում:

Մյուս տեղեկությունը Սարգիս Բերիացու մասին նույնպես հաղորդում է Առաքել Դավրիժեցին: «Եւ եղեւ ի գնալն մեր յԵրուսաղէմ, յորժամ հասաք ի Հալապ, պատահեցաք այս Սարգիս քահանային, որ ի կարգս զրուցաց հանապազ խօսէր ընդ մեզ

⁷ Տե՛ս «Философские труды в армянских рукописях Матенадарана (Краткий библиографический указатель)», «Вестник Матенадарана», т. 3, Ер. 1956, с. 443.

⁸ Նույն տեղում:

⁹ Ա. Սյուրմեյան, նշ. աշխ., էջ 455:

գորպիսութենէ ականց»¹⁰: Դավրիժեցին, խնդրում է Սարգսից այդ ամենը, ինչ վերնբերում է թանկարժեք քարերին, գրել և տալ իրեն՝ իր աշխատութեան մեջ գետեղելու համար: Դրա համար ժամանակ էր պետք: Սարգիսը կատարում է իր խոստումը: Երուսաղեմից վերադառնալիս Դավրիժեցին Հալեպում ստանում է գրավոր շարադրանքը և իր հետ բերում է էջմիածին, և իր «Պատմագրութուն» վրա աշխատեին, մուծում է այն իր շարադրանքում Սարգսի անունով, փրկելով այդ արժեքավոր գործը կորստից:

Մենք ենթադրում ենք, որ հենց այդ ժամանակ էլ Սարգիս քահանան տալիս է Առաքել Դավրիժեցուն այս փիլիսոփայական գործը, որն էջմիածնում մոտավորապես 1655-1657 թվականներին ընդօրինակում է Հակոբ աբեղան (տե՛ս հմր. 2361 ձեռագրի 232 էջը): 1662 թ. Առաքել Դավրիժեցին ավարտում է իր «Պատմագրութեանը», այդ նույն թվականին Հալեպում մահանում է Սարգիս քահանան: Նրա մարմինն ամփոփվում է Հալեպի Քառասուն մանկանկաց եկեղեցու գերեզմանատանը: Նրա թանկարժեք քարերի մասին աշխատութունը փրկում է Առաքել Դավրիժեցու շնորհիվ, որի աշխատութունը հրապարակվում է դեռ իր կենդանության օրոք՝ 1669թ. Ամստերդամում (տպագրիչ՝ Ոսկան Երևանցի):

Ինչ վերաբերվում է Սարգիս քահանայի «Յաղագս աշխարհի» երկին, ապա այն պարունակող ձեռագրի-

¹⁰ Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 448:

րը (հմր. 2361) այստեղ՝ էջմիածնում հարստացվում է կարևոր հիշատակարանով: Այն գրվել է ձեռագրի վերջին ազատ էջերում Երևանի 1679 թ. ահավոր երկրաշարժի ականատեսի ձեռքով հենց երկրաշարժի օրերին, երբ փլվեցին Երևանի և շրջակա գյուղերի գրեթե բոլոր եկեղեցիները և տները, փլվեց Գառնիի հեթանոսական տաճարը և նրան կից կլոր եկեղեցին: Ականատեսը, ամենայն հավանականությամբ, էջմիածնի միաբանը, խոսում է հարյուրավոր զոհերի, ամիսներ շարունակ կրկնվող ուժգին ցնցումների, փլատակների տակ մնացած մեռելների, հեռավոր գյուղերից օգնության եկած մարդկանց մասին են:

Պարզ է, որ այս հիշատակարանը (335ա-337ա) գրվել է երկրաշարժից անմիջապես հետո՝ 1679 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, երբ ցնցումները ավելի թույլ (աֆտերշոկերը) դեռ շարունակվում էին: Բուն ձեռագիրը գրվել է երկրաշարժից մեկերկու տասնամյակ առաջ՝ 1650-ական թվականներին: Այն պարունակում է հիմնականում քերականական և փիլիսոփայական աշխատություններ և սկսվում է 17-րդ դարի հայտնի քերական և փիլիսոփա Միմեոն Ջուղայեցու «Քերականությամբ»: Մեր կարծիքով (ենթադրությամբ) Սարգիս քահանայի «Յաղագս աշխարհի» երկը, Առաքել Դավրիժեցին Հալեպից բերել է էջմիածին 1655 թ. և հանձնարարել այն Հակոբ աբեղային ընդօրինակելու (հմր. 2361 ձեռագիրը) կազմելու ժամանակ: Այն միակ ընդօրինակությունն է, որն այժմ մենք ունենք և հրապարակում ենք նույնությամբ:

Սարգիս քահանայի փիլիսոփայական հայացքները մինչ այժմ լուսաբանված չեն: Միակ հիշատակումը մենք տեսնում ենք Վ. Չալոյանի աշխատության մեջ¹¹, որը Սարգիս քահանային նվիրել է ընդամենը հինգ տող: Այստեղ տրված է ոչ ճշգրիտ գնահատական և բնագրից ամենևին չհետևող բնորոշում: Նա գրում է

«Հոմանունի արիստոտելյան հասկացության հիման վրա նպատակ է դրվում ցույց տալ աստվածաբանության համատեղելիությունը գիտական ճանաչման հետ»¹²:

Եզրակացությունն արվել է երկի միայն առաջին պարբերության հաղթահարումից հետո, անտեսելով տասներեք գլուխների բովանդակությունը:

Սարգիս քահանան «աշխարհ» հասկացության երեք իմաստների մասին խոսելիս և շեշտելով նրա «աստուած, մարդ և զգալի աշխարհ» իմաստները, հատուկ նշում է, որ այս գործում քննելու է նրա երրորդ իմաստը՝ «զգալի աշխարհն այս, որ և սորին վասն է բանս. աշխարհ ասի, զի է բաղկացութիւն յերկնէ և յերկրէ և որ ի նոսա են բնութիւնք տարբերք և զանազանք» (241ա): Հետագա ողջ շարադրանքը ունի տիեզերաբանական-տիեզերագիտական բովանդակություն, և այսպես մինչև իններորդ (Թ) գլուխը, որից սկսվում և ընթանում է մինչև

¹¹ Տե՛ս **В. К. Чалоян**, История армянской философии, Ер. 1959, с. 333. Նույնը հայերեն հրատարակության մեջ՝ **Վ. Չալոյան**, Հայոց փիլիսոփայության պատմություն, եր. 1975:

¹² Նույն տեղում:

աշխատությունների վերջը՝ (գլուխ ԺԳ) հոգեբանությունը նվիրված շարադրանքը: Այնպես որ Սարգիս քահանային վերագրել աստվածաբանության և գիտական ճանաչման համատեղելիության գաղափար և հայտարարել, որ դա երկի նպատակն էր, հեռու է ճշմարտությունից:

Գլուխների անվանումները բավականին խոսուն են «Յաղագս թէ որպէս ձեւ ունին երկինք եւ երկիր...» (գլ. Բ), «Յաղագս որքանութեան երկնից...» (գլ. Գ), «Յաղագս թէ զինչ է լոյս» (գլ. Դ), «Յաղագս թէ զինչ է ժամանակ» (գլ. Ե) և այլն: Հեղինակը բնագիտական ուղղության հետևորդս է, որ դեռևս վաղ միջնադարում հայ փիլիսոփայության մեջ հիմնադրել էր Անանեա Շիրակացին:

Շարադրելով հիմնական ավանդական դրույցները (երկրակենտրոն համակարգ, երկրի գնդաձևության, Արևի և Լուսնի խավարումների պատճառների բացատրություն, մոլորակների շարժումը ևն) Սարգիս Բերիացին հայ գիտական գրականության մեջ թերևս առաջինն է, որ խոսում է «նորագյուտ աշխարհի» (241բ) և «գերհյուսիսականի» (242բ) մասին: «Նորագյուտ աշխարհը», որպես հակակշիռ «հին աշխարհին», ըստ հեղինակի, արևմտյան կիսագունդն է, որ օվկիանոսով անջատված է և ավելի մեծ «քան զսաս», այսինքն «հին աշխարհը»: Դա Ամբրիկան է, որի անունը Հալեպում ապրող հեղինակը դեռ չգիտի, բայց նրան հասել է այն լուրը, որ կա նոր հայտնագործված մայրցամաք:

Նրան հայտնի է նաև «դերձյուսիսականը», այսինքն Անտարկտիկան. այն հակադիր է երկրագնդի ճյուղասային մասին՝ Արկտիկային, բայց նա չգիտի մայրցամաք Անտարկտիդայի գոյության մասին, որը հայտնաբերվեց միայն XIX դարում:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում հոգեբանությունը նվիրված գլուխները (Թ-ԺԳ), որտեղ հեղինակն ամփոփել է հին և միջնադարյան փիլիսոփաների տեսակետները հոգու, նրա տեսակների (տնկական, զգայական, բանական), հատկությունների և այլնի մասին, սկսած Արիստոտելից և Դավիթ Անհաղթից մինչև միջնադարյան մտածողները: Նա վիճաբանում Ալբերտ Ֆոն Բոլշտեդտի հետ (էջ 253բ), գտնելով, որ հոգու սննդական զորությունը նախորդում է ծննդական զորությանը և ոչ թե հակառակը, ինչպես պնդում է Ալբերտը, «զի սննդականն, որ է նախկին ի մասունս տնկականին, ունի չորս զօրութիւնս, ... որք են առիթ կենդանութեան, զի առանց սոցա ոչ է կար կենդանույ գոլ, և քանակ նորին պահի»:

Հետաքրքրական տեղեկություններ և դատողություններ է պարունակում բանական հոգու ճանաչողական հատկություններին և աստիճաններին նվիրված հատվածը՝ «հասարակ զգայութիւն, երևակայութիւն, կարծիք, տրամախոհութիւն և յիշողական» (254բ): Հոգեբանության մասնագետների համար այստեղ կա բավական հարուստ նյութ: Մենք հրավիրում ենք նրանց ուշադրությունը սրա

վրա, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սարգիս Բերիացու երկը ուշագրավ մանրամասներով լրացնում է 17-րդ դարի մյուս հայ մտածողների, մասնավորապես Սիմեոն Ջուղայեցու, Ստեփանոս Լեհացու, Հովհաննես Ջուղայեցու երկիրը շունեն հոգեբանությունը նվիրված շարադրանքներ:

Գիտական շրջանառության մեջ գնելով Սարգիս Բերիացու «Յաղագս աշխարհի» երկը, համոզված ենք, որ այն իր արժանի տեղը կգտնի 17-րդ դարի հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ:

Սեն Արևշատյան

ՍԱՐԳԻՍ ԲԵՐԻԱՅԻ

**ՅԱՂԱԳՍ ԱՇԽԱՐՀԻ
ԵՒ ԱՅԼ ՄԱՍՆԱԻՈՐ ԻՐԱՑ**

(240ա) ԱՇԽԱՐՀԻ ԵՒ ԱՅԼ ՄԱՍՆԱԻՈՐ ԻՐԱՑ ՍԱԿՍ
ՍԱԿԱԻԱՀՈՐ ԲԱՆՔ, ԱՐՏԱԳՐԵԱԼՔ Ի ՍԱՐԳՍԵ
ՈՒՄԵՄՆԷ, ՊԻՏԱԿ ԱՆՈՒԱՄԲ ՔԱՀԱՆԱՅԷ, ՍԱԿՍ
ՎԱՐԺՄԱՆ ԱՆՁԻՆ ԻԻՐՈՅՑ¹

ՅԱՂԱԳՍ ԹԷ ԶԻՆՁ Է ԱՇԽԱՐՀԷ

[Ա]

Աշխարհն հոմանուն է և բազմապատկաբար ասի, վասն որոյ ոչ սահմանի, զի հոմանուն ձայնն ծնող է մոլորութեան, ուստի Արիստոտէլ³ և այլ իմաստասէրք ի բացայայտելն զիր ինչ՝ նախկնաբար զհոմանունութիւնն, որ է ի նմա, տարորոշեն, և ապա յաղագս որոյ գիտաւորութիւնն է՝ ենթագրեն և բաժանեն: Որոց հետեւեալ և Պորփիրիոս⁴ ընդ նոցին բացորոշութեանց առնէ, որպէս և ի հինգ ձայնսն տեսանելի է, զոր Դաւիթ ի վերլուծութեան սոցին ասէ⁵, եթէ զոր Պորփիրիոս //(240բ) լաւագոյն համարի, նախ և առաջին Արիստոտէլական բացորոշմանցն հետեւիլ, զի մի յանհուն երկբայութիւնս, ասէ, անկեալ ցնթիցի: Յաղագս որոյ և մեզ, որ հետևողքս եմք ճշմարտութեան, արժանավայելուչ է տարանջատել զհոմանունութիւնն, որ ի սմա նախկնաբար, և ապա զմի մի զիւրաքանչիւրսն առանձնակի հանգանակել, և յետոյ, յաղագս որոյ բանն է, ասել:

Արդ, ըստ երից եղանակաց ասի աշխարհ: Նախ Աստուած, որ է իմանալի աշխարհ: Երկրորդ՝ մարդ, որ է բաղադրեալ աշխարհ: Եւ երրորդ, աշխարհս այս, որ է զգալի աշխարհ: Եւ աշխարհ ասի Աստուած այսպէս և ըստ այսմ օրինակի, զի է նախագաղափար և հայելի էիցս ամենեցուն, զի նախ քան զլինելն աշխարհի այնպէս էին նախատիպ օրինակք էիցս յԱստուած, որպէս տեսանելիք իրաց ի միտս արուեստաւորին նախ քան զածելն ի գործ, և նախատիպ օրինակն այն ոչ այլ ինչ է եթէ ոչ Աստուած:

Իսկ մարդ ոչ ըստ այսմ, այլ այլ իմն եղանակաւ ասի աշխարհ, զի ունի յինքեան զամենայն էիցս նմանութիւն, քանզի ունի գոլ ընդ անշունչսն, և կեալ ընդ տունկսն, և զգալ ընդ ըզգայունսն, և իմանալ ընդ հրեշտակսն, և համայն իսկ ասացից շաղկապօղ իմանալեաց և զգալեաց: Յաղագս այս, որպէս ասէ սուրբն Գրիգոր⁶, եթէ փոքր աշխարհ ասի մարդ:

//(241ա) Իսկ զգալի աշխարհս այս, որ և սորին վասն է բանս, աշխարհ ասի, զի է բաղկացութիւն յերկնէ և յերկրէ և որ ի նոսա են բնութիւնք, տարերք և զանազանք, քանզի բոլորից կարգաւորութեանցն իսկ և զարդարմանն ասի աշխարհ:

Արդ, սահմանի տարբերութիւնքս այսոքիւք լիապես, յայտ է ի զանազանութեանցս յայսցանէ, զոր ասելոց եմք այժմ: Քանզի ասելով յերկնէ և յերկրէ, զանազանէ զսա յիմանալի աշխարհէն, որ է Աստուած, զի յԱստուած ոչ գտանի մարմնական իր, այլ է էութիւն անմարմին, իմանալի և զուտ ներգոր-

ծուլթիւն, անփոփոխ և յաւիտենական: Իսկ ասելովն, թէ և որ ի նոսա են բնութիւնք, տարբերք և զանազանք, որոշէ զսա ի բաղադրելոցն, որ է մարդ, քանզի թէպէտ մարդն է ի յերկնէ և յերկրէ, այսինքն ի շորից տարերց, զի ի սոցանէ ոմանք երկինք անուանին և ոմանք երկիր, սակայն ոչ են ի նմա բազում բնութիւնք, այլ մի, ապա յայտ է, թէ ասացեալ տարբերութիւնք բաւական են առ ի սահմանել զառաջարկեալն, անջատելով յայլոց: Իսկ եթէ զինչ երկինք, և զինչ երկիր, ոչ է այժմուս ասելի, այլ յետոյ յաղագս սոցա ասասցուք: Բայց այժմ տեսցուք, եթէ զոր ձև ունին երկինք և //(241բ) երկիր, և կամ որպէս կայ հաստատուն երկիրս ի մէջ երկնից:

**ՅԱՂԱԳՍ ԹԷ ՈՐՊԷՍ ՁԵՒ ՈՒՆԻՆ ԵՐԿԻՆՔ ԵՒ
ԵՐԿԻՐ ԵՒ ԿԱՄ ՈՐՊԷՍ ԿԱՅ ԱՆՇԱՐԺԱՊԷՍ
ԵՐԿԻՐՍ Ի ՄԻՋԻՆ ԿԷՏՆ ԵՐԿՆԻՑ**

Բ

Իմաստասէրք զերկինս գնդաձև ասեն, որպէս զինձոր իմն մեծագոյն, որչափ և կարիցէ մարդոյ իմանալ, քանզի սահմանեն զսա շրջական գոլ և արագաթռիչ, իսկ որ շրջական է, նա և բոլորակ է, ապա հարկ է, զի լինիցի երկինքն բոլորակ, քանզի շրջական է: Իսկ երկիր, որ է կայացեալ հաստատուն ի կէտն միջին երկնից, որ և ասի կենսատու և մայր ամենայն մարմնականաց կենդանեաց, ունի զձև

ձևոյ այլ՝ սակաւ ինչ երկայնութեամբ⁷: Եւ ի դիր այսպէս զերկայնութիւն իւր ունի ի հիւսիսոյ ի հարաւ, և զլայնութիւնն յարեւելից յարեւմուտս, և պատեալ են զնովաւ ամենեւին ջուրք: Այլ ուրեք ուրեք երեւին կղզիք ոմանք մեծագոյնք և այլք փոքրագոյնք: Բայց են կղզիք երկու⁸ հանդէպ միմեանց՝ յոյժ լայնանիստք և արծակք, զորս և տիեզերս անուանեմք, յորոց մինն է այս, զոր և բնակեալ իսկ եմք: Իսկ միւսն, որ ասի նորագիւտ աշխարհ⁹, և կղզին այն մեծ է քանակաւ քան զսա, որպէս ա//((242ա)սէ Արիստոտէլ¹⁰: Եւ ունի երկիր զմի ծագն բարձրագոյն քան զմիւսն՝ հակակշիռ միմեանց:

Եւ է երկիր բնութեամբ ծանր և խիտ, իսկ երկինք՝ թեթև, պարզ և վճիտ: Եւ է երկիր թանձրագունիցն և երկինք անօսրագունիցն, զի ամենայն որ ծանր է բնութեամբ, վաղվաղակի և արագարագ առ սա հասանէ, փախուցեալ յայլոց թեթևագունիցն բնութեանց, զոր օրինակ քար իմն եթէ հոսիցի ի բարձրութենէ, որպէս յական թօթափելն երկիր հասանէ, նոյնպէս և յամենայն կողմանց երկրիս իմանալի է: Եւ սորին ներհակն պատահի, երկնից ջուրց կան ի տեղիս իւրեանց անշարժապէս՝ փախուցեալք ի միմեանց:

Իսկ մարդիք¹¹ գնան ի վերայ երկրի յամենայն կողմանց կառօք և երիվարօք, ոմանք ի զբոսանս, և կէսք ի վաճառս, և այլք ի պատերազմ: Նոյնպէս և ի ծովու նաւուք՝ յամենայն կողմանց պատելով զծով: Բայց որ յԱնդրնդականն լինի անուանեալ ծով, է յոյժ հոսանուտ, վասնորոյ ընդ այն վայր կարի

դժուարին է անցանել, և է սա բազմաց անգիտելի: Քանզի եթէ զինչ անդընդական իցէ և կամ ուր, արդեաւք ոչ գիտեն: //(242բ) Իսկ ծովն, զոր ովկիանոս ասեն¹², ունի սուղ ինչ բերան առ մուտս արևու մերձ արձանացն Հերակլեայ¹³, զոր ասեն լեալ զնա երկոտասան կանգնոյ, որով արտաքս հոսի յԱնդընդական ծովէն և պար առնու զգաւառս մեծամեծս:

Եւ արդ գիտելի է, զի պատեալ է երկինք զերկիր, որպէս ասացաք, և է միշտ ի շրջագայութեան անդադրապէս ի վերայ երկու կիտիցն, որ են հանդէպ միմեանց անշարժք՝ մինն ի հիւսիսային վայր են, որ և տեսանի իսկ նկատողաց, իսկ միւսն հարաւային՝ անտես ի մարդկանէ, թագուցեալ ընդ երկրաւ զոր ասէն դերհիւսիսական¹⁴:

**ՅԱՂԱԳՍ -----ՈՐՔԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԿՆԻՑ ԵՒ
ԴԱՍԱԽՈՐՈՒԹԵԱՆ ՆՈՑԻՆ¹⁵ ---**

Գ

Երկինքն հոմանուն է, և ի վերայ բազմաց ասի, քանզի երկինք կոչի և ամենասուրբ Երրորդութիւնն, և վասն Պօղոսի յափշտակիլ յերրորդ երկինս¹⁶, այսպէս և այլոց բազմաց ասի երկինք: Այլ բնականապէս ըստ իսկութեան առեալ են տասն երկինք: Նախ հրեղէնն, երկրորդ՝ ջրեղէնն կամ պլօրեղէնն: Երրորդ՝ հաստատութիւնն, //(243ա) ապա՝ եօթն գօտիք մոլորականաց: Բայց Ալպերթիոս վեշտասան

երկինք ասէ¹⁷, թուելով և զեռակի ներկայարանս հրոյն և օդոյն: Իսկ այլք ոմանք՝ երկոտասան, ոչ թուելով միջին ներ կայարանսն, այլ և ոչ զհրեղէնն և ըզջրեղէնն, և այսպէս զանազանապէս ըստ զանազան կարծեաց եղեալք գոն:

Իսկ յաղագս դասաւորութեան սոցին գիտելի է, զի որպէս յառաջագոյն ասացաք, եթէ երկիր՝ թանձր գոլով բնութեամբ, փախուցեալ յայլոց, ներհակ ունակ բնութեանցն իբր յամենայն կողմանց ամրացեալ և խտացեալ, կայ հաստատուն ի կէտն միջին անշարժապէս¹⁸, և զնովաւ ջուր, և պարառեալ է յամենայն կողմանցն ըզջուր, օդ և զօդ, հուր:

Իսկ յետ հրոյն՝ եօթն գօտիք մոլորականցն՝ միշտ վերնագոյն մեծ քան զստորնագոյն, պարունակելով զմիմեանս: Եւ են այսոքիկ Լուսինն, Փայլածուն, Լուսաբերն, Արեգակն, Հրատն, Լուսնթագն, Երևակն: Եւ յետ եօթանց մոլորականացն գօտեաց՝ աստղալից երկինքն, և ի վեր քան զայս՝ երկինն ջրեղէն: Եւ զայսոքիկոք ամենեքումբք պատեալ է հրեղէն երկինքն: Եւ սահմանի սա այսպէս. երկին է մարմին անօսր և յոյժ նրբագոյն, բնութեամբ անապական, որակութեամբ լուսաւոր, պարագ/(24Յբ)րական ամենայն ստեղծուածոց, որ յինքեան, էութեամբ անշարժ, բրնակարան հրեշտակաց և հոգւոց սրբոց, տեղի և ավոռ Աստուծոյ:

Իսկ ջրեղէն երկինքն, որ է առաջին շարժունն, սահմանի այսպէս. երկին է մարմին բարձր, և լուսաւոր, շարժմամբ Արեգական (սե)րտ(ա)գոյն, և ազդու ի ստորնայինսն, բնութեամբ անապական և նիւթովն մաքուր:

Իսկ հաստատութիւն սահմանի այսպէս, երկինն է մարմին բարձր և կայական, մըշտաշարժ, մասամբ ինչ զօրութեամբ և մասամբ ինչ ներգործութեամբ, տեղի և օթարան անմոլորից աստեղացն բազմութեան, վասն զի ի նմայ բեւեռեալք գոն անմոլորից բազմութիւն և երկոտասան կենդանակերպք:

Իսկ երկոտասան կենդանակերպք ընդունին բազում զանազան բնութիւնս, քանզի Խոյն և Առիւծն և Աղեղնաւորն են բնութեամբ ջերմ և չոր, Յուլն և Կոյսն և Այծեղջիւրն են չոր և ցուրտ: Իսկ Եկաւորն և Կշիռն և Զրհոսն են ջերմ և գէճ: Այլ Խեցգետինն և Կարիճն և Զուկն են ցուրտ և գէճ¹⁹: Եւ պատեալ են սոքա զերկինս և ընդմիշտ շրջաբերեալ լինին:

Իսկ մոլորակք ի գօտիս իւրեանց շարժին, երբեմն բարձրանալով և երբեմն խոնարհելով, և ունին յատուկ և հասարակ //(244ա) շրջագայութիւնն:

Եւ է սոցին նախ և առաջին Երեւակն, զոր երկու ամ և կէս յամէ իւրաքանչիւր կենդանակերպս, և յուրաքանչիւր կենդանակերպ երեսուն աստիճան է, և ի մի աստիճանն յամէ երեսուն օր, և կատարէ զընթացս իւր ի երեսուն ամն, և է սա բնութեամբ ցուրտ և չոր: Եւ ի շարագուգիլն ընդ Արեգականն ջերմութիւն Արեգականն թուլանայ: Եւ ընդ Լուսնթագին շարագուգեալ պայծառանայ ինքն, և յոյժ վնասակար, քանզի յորժամ տիրէ սա, կենդանեաց ծնունդքն լինին տկարք և վատուժք:

Երկրորդ, Լուսնթագն զոր յամէ իւրաքանչիւր կենդանակերպս մեկ ամ, և ի մի աստիճանն, երկոտասան օր, կատարէ զընթացս իւր յերկոտասան ամն, և է սա բնութեամբ ջերմ և գէճ և է գունովն պայծառ և միշտ բարեխառն:

Երրորդ, Հրատն զոր քառասուն և յիսուն օր յամէ իւրաքանչիւր կենդանակերպս, և ի մի աստիճանն օր և կէս, կատարէ զ[ը]նթացս իւր ի մի ամ և կէսն: Եւ է սա բնութեամբ ջերմ և չոր է յոյժ վնասակար, զի գրոգոէ զմարդիքս ի պատերազմ:

Չորրորդ, Արե//(244բ)գակն, զոր յամէ յիւրաքանչիւր կենդանակերպս երեսուն օր և ի մի աստիճանն մի օր, կատարէ զ[ը]նթացս իւր ի մի ամն: Եւ է սա բնութեամբ ջերմ և լուսաւոր, ութնապատիկ մեծ քան զԵրկիր: Եւ սահմանք քառասուն ասեն, և այլք՝ հարիւր քառասուն:

Հինգերորդ՝ Լուսաբերն, զոր յամէ յիւրաքանչիւր կենդանակերպ երկոտասան օր և ի մի աստիճանն՝ վեց ժամ, կատարէ զընթացս իւր ի վեց ամիսն: Եւ է սա բնութեամբ ջերմ և խոնաւ որակութիւնն որպէս պղինձ:

Վեցերորդ՝ Փայլածուն զոր յամէ յիւրաքանչիւր կենդանակերպս եօթն օր և կէս: Եւ ի մի աստիճանն երեք ժամ, կատարէ զընթացս իւր յերեք ամն: Սա պատճառէ զգեղեցկախօսութիւն, և տիրէ սերմանց:

Եօթներորդ՝ Լուսինն, զոր յամէ յիւրաքանչիւր կենդանակերպս երկու օր և կէս և ի մի աստիճանն մի ժամ, կատարէ զ[ը]նթացս իւր քսան և ինն օր և կէսն: Եւ է սա բնութեամբ ցուրտ և գէճ, ի նորիւն սորա բարեգոյն է սերմանելն, այլ և պատճառէ և զնուազութիւն ջուրց և քանակաւն հաւասար է երկրիս:

Իսկ յաղագս չորից տարերց գիտելի է, զի են իրօք ինչ ընդ միմեանս հաղորդք և իրօք ինչ տարորոշք, վասնորոյ պարտին ի միասին բացայայտիլ:

//(245ա) Արդ, ի սոցանէ իւրաքանչիւրքն ունին երկուս տեսակս՝ գոյացական և պատահական, զի հուրն ունի ջերմութիւն և շորութիւն և է որպէս գոյացական ջերմն և պատահական շորն: Նմանապէս և օդն ունի երկու տեսակս՝ գոյացական զրգէճ և պատահական զջերմ: Սոյնպէս և ջուր գոյացական ունի ըզցուրտ և պատահական զգէճ: Ըստ այսոց և երկիր գոյացական զշոր և պատահական՝ զցուրտ: Եւ է հաղորդ հուր օդոյ գոյացականան, և զանազանի պատահականան, այսպէս և օդ ջրոյ հաղորդի գոյացականան: Նոյնպէս և ջուր և երկիր, զի վերնոցն հաղորդին ստորինքն պատահականան, և վերինքն ներքնոցն գոյացականան և զանազանին անդրադարձապէս առեալ: Եւ թէ վերին ծայր հրոյն շոր և ներքինն ջերմ: Եւ օդոյն վերին ծայրն ջերմ և ներքինն գէճ: Իսկ ջրոյն վերինն գէճ և ներքինն ցուրտ: Եւ երկրի վերինն ցուրտ և ներքինն շոր: Վասնորոյ հաղորդին ընդ միմեանս, ոմն գոյացականան և ոմն պատահականան: Իբր ստորինն վերին մասամբն հաղորդի ներքին մասին վերնոյն: Եւ ոչ եթէ ի վեր և ի վայր կալմամբ միայն հաղորդին սոքա, այլ և շուրջանակի: Եւ ունեն սոքա միշտ առ միմեանս փոփոխումն, զի երկիր տղմացեալ լինի ջուր, և ջուր //(245բ) թանձրացեալ և կաւացեալ լինի երկիր: Իսկ ջուր ջեռեալ և շոքացեալ լինի օդ: Օդ ժողովեալ և խտացեալ լինի ջուր, եւ շորացեալ լինի հուր: Այսպէս և հուր, շիջեալ և ի բաց եղեալ զշորութիւն, լինի օդ: Եւ ջերմութիւն ի բաց եղեալ լինի երկիր, որպէս յայտ է ի շանթեացն, զոր բերին ի վայր, զի ցոյացեալ հուր և յոյժ եռացմանէն քարացեալ:

Այլ և գայս գիտելի է, զի որակութիւնքն ոչ կարեն ըստ ինքեանց գոլ տարր, քանզի յանմարմնոց ոչ է կար հաստիլ մարմնոց, և սոքա միայն ինքեանք ունին զորակութիւն ներգործութեամբ, իսկ նայլան ամենայն՝ միայն զօրութեամբ:

Եւ արդ հուրն ունի երիս ներկայարանս՝ վերին, ներքին և միջին: Վերինն կոչի հրային, միջինն կոչի օլոմպիականն վասն մէջն գոլոյն յՈլոմպիոս լեառն: Այսպէս և օդն ունի երիս ներկայարանս: Վերինն, որ կոչի եթէրային, միջինն և ներքինն, որ ասի օդային: Ի վերինն է յոյժ ջերմութիւն և լոյս պայծառ: Նոյնպէս և ի ներքինն, իսկ միջինն լնու ոչ:

Իսկ յաղագս որքանութեան տարակացութեանցն պարունակաց գիտելի է, զի յերկրէ մինչև ի Լուսինն //(246ա) են մղոնք հնգետասան հազար և քսան հինգ: Ի Լուսնէն մինչև ի Փայլածուն են մղոնք եօթն հազար, սապէս և երկոտասան: Ի Փայլածունէն մինչև ի Լուսաբերն նոյն չափ: Ի Լուսաբերէն մինչև յԱրեգակն են մղոնք քսան երեք հազար, նաև երեսուն հազար: Ի յԱրեգակէն մինչև ի Հրատն են մղոնք հնգետասան հազար և քսան հինգ: Ի Հրատէն մինչև ի Լուսնթագն են մղոնք վեց հազար և երկոտասան: Ի Լուսնթագէն մինչև յԵրևակն՝ նոյն չափ: Ի յԵրևակէն մինչև ի հաստատութիւն են մղոնք քսան երեք հազար, շորս հարիւր և երեսուն վեց: Եւ բովանդակն այս է հարիւր եօթն հազար, երեք հարիւր և եօթանասուն երկու մղոն: Եւ մին մղոնն հինգ ասպարէզ է, և մին ասպարէզն հինգ հարիւր նետաձիգ է:

ՅԱՂԱԳՍ ԹԷ ԶԻՆՁ Է ԼՈՅՍ

Դ

Լոյսն հոմանունն է և առնանի ի վերայ յոքունցս, քանզի լոյս ասի և յամենասուրբ Երրորդութեանն և դասուց հրեշտակաց և հոգւոց սրբոց և այլոց բազմաց, քանզի սովորեցաք միշտ զպատկանագոյնսն լոյս կոչել: Այլ լոյսն, որ է ըստ գիտութեան ճանապարհի, ըստ փիլիսոփայիցն սահմանի այսպէս: Լոյսն է զգալի որակութիւն և ներգործութիւն, լուսաւորի ըստ այնմն, որ լուսաւոր, քանզի Արեգակն և այլք աստեղք, որք են լուսաւորք, ի ձեռն լուսուն միջնորդութեան ազդեն զգորութիւնս իւրեանց ի ստորնայինս՝ որպէս //(246բ) հուր ի ձեռն ջերմութեան, որ է ներգործական՝ որակութիւն նորին ներգործէ: Եւ բաժանի սա ըստ ենթակային բաժանմանն յերկուս, այսինքն ի տարրականն, և յոչ տարրականն: Եւ դարձյալ տարրականն, ըստ նոյն բաժանման, տրամատի յերկուս, այսինքն ի հուր և յօդ: Իսկ հուրն ըստ երից եղանակաց ասի, քանզի ըստ այնմ, որ է ի նիւթ երկրային՝ ասի կայծակն, և ըստ այնմ զի է ի նիւթ օդային՝ ասի բոց, իսկ ըստ այնմ զի է ի յատուկ նիւթն իւր՝ ասի լոյս:

Արդ, որպէս ըստ զանազան նիւթոցն զանազանեն և անուանակոչութիւնքն, այնպէս և ինքեանք ըստ յաւէտ և նուազ գոլոյն, քանզի այն, որ է ի նիւթ երկրային, ունի նուազ զլոյսն, իսկ այն, որ է ի նիւթ օդային, առաւելագոյն ունի զլոյսն, այսպէս և այն,

որ է յատուկ նիւթն իբրև ի բոլորակ գօտւոջն, ունի այլ իմն եղանակաւ: Բայց գիտելի է, զի հուրն յիւրումն բոլորակին ոչ է լուսաւոր ըստ ինքեան, այլ առաւել լուսաւորելի, զի ոչ ոք թափանցիք մարմին լուսափայլէ: Բայց քանզի մերձ է Արեգականն, լուսաւորէ զնա շառավիղացն իւրոց սփռմամբ: Իսկ հուրն, որ առ մեզ, լուսափայլէ վասն միաւորելոյն ի նիւթն //(247ա) յորում է: Իսկ օդն ոչ որպէս զըհուրն, որ է առ մեզ, ունի զլոյսն և ոչ որպէս զայլ լուսաւորսն, քանզի հուրն, որ առ մեզ է, անանջատաբար ունի զլոյսն, զի որքան հուրն հուր է, ընդ նմին է և լոյսն իւր, այլ եթէ ուրեք երևեսցի հրոյ ոչ ունել զլոյս, այն ոչ է ըստ տեսակին հրոյն, այլ սակս ոչ ընկալմանն կատարելապէս զտեսակին հրոյն: Իսկ օդն միշտ և յաւէտ ընդունի զփոփոխումն, զի է յար ի յայլայլման: Նոյնպէս և լուսաւորքն յայտ է, զի յարամնայաբար ունին ըզլոյսն, զի թէպէտ հազիւ և յարամնայաբար երբեմն պատահի սահմանաց ներհակն, այլ ոչ միշտ, իսկ օդոյն միշտ:

Դարձեալ հուրն, որ առ մեզ, ըստ ինքեան ունի զլոյսն, զի է որակութիւն նորին ներգործական: Իսկ օդն ոչ ըստ ինքեան է, այլ յայլմէ, քանզի լոյսն, որ է ի յօդս, է նմանութիւն լուսոյ Արեգականն տպաւորեալ ի նմա, որպէս զանազան գունոց նմանութիւն: Բայց սա յոյժ անօսրագոյն, զի անարգել գոյնքն երևին, քանզի և ոչ որպէս զգոյնն է, յորմէ ծնեալ լինի: Վասն որոյ ասեն ունել լինելութիւն հոգևոր: Իսկ հուրն, որ է ի յատուկ գօտւոջն իւրում, է անօսրագոյն քան զօդ և ունի ծիրանա//(247բ)գոյնութիւն, ինչ և է քանակաւն լայնագոյն, քան զսա տե-

դեան բարձրագոյն, բնութեամբն զանազան ըստ այսոցիկ և լոյսն եղիցի: Բայց և համաձայնի, զի երկոքեանն են լուսաւորելիք և ոչ լուսաւորք, փոխանակականք, այլ ոչ անփոփոխք անկատարք, այլ ոչ կատարեալք: Իսկ ոչ տարրականն, որ է ի հինգերորդ էութենէն՝ բաժանի յերկուս, այսինքն ըստ ինքեան ունօղն զլոյս և յոչ ըստ ինքեան ունօղն: Ըստ ինքեան ունօղ՝ Արեգակն, զի միշտ և նոյնպէս բնաւորեալ է գոլ, զի թէպէտ երբեմն երևի պակասեալ: Բայց ոչ է այն ի կողմանէ նորա: Իսկ ոչ ունօղն ըստ ինքեան բաժանի ի Լուսինն և յայլ աստեղս, քանզի սոքա ոչ ունին ըստ ինքեան լոյս, այլ առնուն միշտ յԱրեգակնէն, վասն զի ինքեանք են իբրև զջինջ նիւթ, այլ ծագմամբ շողաց Արեգականն լուսաւորին:

Բայց և զայս գիտելի է, զի Լուսինն միշտ լուսաւոր է, որպէս զչորեքտասանօրեայ, այլ յառաջ կոյս և յետ կոյս ընթանալով երևի առաւելեալ և պակասեալ, և երբեմն իսկապէս պակասի պատահմամբ, այլ երկար ժամանակաւ, որոց վասն ասելի է:

Դարձեալ, տարրականն և ոչ տարրականն զանազանին ի միմեանց ըստ նիւթոյն, զի սոքա փոփոխականք են, և նոքա ոչ, այլ և ըստ տեսակին, զոր //(248ա) դիւրին է իմանալ:

ՅԱՂԱԳՍ ԹԷ ԶԻՆՉ Է ԺԱՄԱՆԱԿ

[Ե]

Ժամանակ է չափ շարժման առաջին՝ առաջին շարժունին, քանզի ամենայն, որ շարժի, հարկ է զի

ժամանակաւ շարժեսցի: Եւ բաժանի յերիս, այսինքն ի ներկայ, յանցեալ և յապառնի: Ներկայ է, որ ոչ ունի մնացական գոլ, այլ անցական է: Եւ անցեալ է յեղափոխումն ներկայի, որ ոչ ևս է ներկայ: Իսկ ապառնի է, որ չևս է եկեալ ի ներգործութիւն, այլ տակաւին գորութեամբ: Արդ, ի սոցանէ ոչ ոք պատշաճի Աստուծոյ, զի Աստուած միշտ մնայ նոյնպէս և ունի կայացեալ գոլ և է յաւիտենական: Իսկ թէ զինչ է յաւիտենականութիւն, ասելի է: Այլ նախ տեսցուք, թէ որով զանազանին ժամանակաւորն, մշտնջենաւորն և յաւիտենականն: Ժամանակաւոր է, որ ունի սկիզբն և կատարած: Այլ յաւիտենական է, որ ոչ ունի սկիզբն և ոչ կատարած: Եւ սահմանի այսպէս. յաւիտենականութիւն է անփոփոխ յարատեւութիւն առանց սկզբան և վախճանի, եւ պատշաճի սա միայն Աստուծոյ: Իսկ մշտնջենաւորն՝ հրեշտակաց և հոգւոց: Այլ ժամանակաւորն միայն փոփոխականաց և ապականացւոց, զի ամենայն, որ է փոփոխական, ասի ժամանակաւոր: Բայց գիտելի է, զի թէպէտ ժամանակն պատճառի //(248բ) յառաջին շարժունէն, որպէս ասացաւ, այլ ոչ է անդ ժամանակն ըստ գոյացութեան, այլ մանաւանդ առ մեզ, զի ժամանակն, որ չափէ զայն յորում է, այլ զայն, յորում ոչ է, վասն զի չափէ միշտ զներգործութիւն մեր: Դարձեալ առ մեզ է ժամանակն, զի աստ է փոփոխումն և այլայլութիւն, իսկ ի յերկինս ոչ գտանի յայսցանէ և ոչ մի, քանզի ոչ գըտանի անդ ամառն և ձմեռն, վրդով և խաղաղութիւն, այլ աստ ի մեզ, զի թէպէտ ունին շարժութիւն և նոքա, բայց ոչ ըստ մեզ, այլ վասն կարօտութեան ստորնայնոցս, զի ի շարժմանէ երկնիցն ասի կեանք սոցա:

Դարձեալ գիտելի է, զի ժամանակն պարունակեալ ունի յինքեան զդարս զանցեալս և զապառնիս: Եւ են դարքն այսոքիկ առաջինն՝ յԱդամայ մինչև ցենովք: Երկրորդն՝ յենովքայ մինչև ցնոյ: Երրորդ՝ ի նոյէ մինչև ցԱբրահամ: Չորրորդ՝ յԱբրահամէ մինչև ցՄովսէս: Հինգերորդ՝ ի Մովսիսէ մինչ ի Քրիստոս: Վեցերորդ՝ ի Քրիստոսէ մինչև ի միւս անգամ գալուստն: Եօթներորդն՝ յարութիւն մեռելոց: Իսկ ոմանք ոչ թուեն զենովք և ընդ Մօսէսի զԴաւիթն, այլ և զգերութիւնն բաբելոնացւոց ի թիւ արկանեն:

Դարձեալ գիտելի է, զի տարի և ամիս և օր են ժամանակք, //(249ա) զի չափեն իւրաքանչիւրքն զմիոյ իրի շարժութիւնք: Քանզի չափէ տարին զ[ը]նթացս Արեգական, որ կատարէ յերկոտասան ամիսն, զի յերկոտասան ամիսն միանգամ ուստի ելանէ Արեգական, դարձեալ ի նոյն տեղին գայ հասանէ: Իսկ ամիսն չափէ զ[ը]նթացս Լուսնին, որ կատարէ ի քսան ինն օր և կէսն: Իսկ օրն չափէ զշարժութիւն երկնից:

Դարձեալ յաղագս շաբաթուց և ժամուց, և մասանց: Գիտելի է, զի շաբաթն, որ է եօթն օր, կոչեցաւ եօթն մոլորակացն, զոր հինքն եօթն տուն աստուածոց կոչէին: Է սա փոքր մասն տարւոյ և մեծ մասն ամսոյ. այսպէս և ժամանակ, որ է չափ զընթացիցն Արեգականն, որ ի մի օրն կատարէ, է փոքր մասն զշաբաթու և մեծ մասն աւուր: Իսկ մասն, որ և սա է չափ թաւալման Արեգական, է մասն ժամու: Եւ գիտելի է, զի տարին և ամիսն և օրն են միմեանց պատկեր: Զի օրն պատկեր է ամսոյ և տարւոյ, քանզի օրն միայն ի տիւն է երեք հարիւր վաթսուն հինգ մասն, իսկ ամիսն երեք հարիւր վաթսուն հինգ ժամ, իսկ տարին երեք հարիւր վաթսուն հինգ օր:

2

Արեգակն և Լուսինն առ աչս հանգէտ միմեանց թուին գոլ ըստ քանակին, բայց ոչ են, քանզի Լուսինն //(249բ) համաշափ է Երկրիս, որպէս յառաջագոյն ասացաք: Իսկ Արեգակն բազմապատիկ մեծ քան զԵրկիրս, որպէս ասեն իմաստասէրք, զի ասեն զնա գոլ ութապատիկ մեծ քան զԵրկիրս, և ոմանք հարիւր և վաթսուն հինգ, և այլք այլ իմն, ուրեմն և քան զԼուսինն եղիցի մեծ: Եւ ճշգրտի այս որոնմամբ նոցին տարակացութեանցն, զոր ունեն ի միմիանց:

Արդ Արեգակն, որ է մեծագոյն քան զԼուսինն և քան զԵրկիրս բազմապատկաբար, է մարմին լուսաւոր, զի միշտ լուսաւորէ ձրգմամբ շառաւիղացն հաւասարապէս զամենայն աստեղս, նա և զԼուսինն: Իսկ Երկիրս, որ է քանակաւ փոքրագոյն, է մարմին խաւարամած, և ունի ստուեր թանձրագոյն, որոյ հիմն իւր է լայնացեալ և որշափ բարձրանայ, նրբագոյն լինի և յետոյ ամենեկին պակասի, և լոյս Արեգականն անդր անցանէ քան զստուերն ըստ անշափ մեծութեանն իւրոյ և լուսաւորէ զամենայն աստեղս: Այլ յորժամ իցէ Արեգակն ի գլուխ Վիշապին, և Լուսինն ի տուտ Վիշապին և անդրադարձեալ, յայնժամ ստուեր Երկրի ուղիղ գայ ընդդէմ Արեգականն²⁰ և խաւարեցուցանէ զնա:

//(250ա) Իսկ յաղագս խաւարման Արեգականն գիտէլի է, զի Լուսինն ընդ առաջ ընթանալն քան զԱրեգակն նուազի, և ընդ հետեւին աճէ: Այլ յորժամ Լուսինն և Արեգակն ի միում կենդանակերպի հան-

դիպեցին, իբր ուղղակի հանդէպ միմեանց իցեն, յայնժամ է խաւարումն Արեգական ի կողմանէ մերմէ, զի յանցանելն Հուանոյն ի մէջ մեր և Արեգական, Արեգակն խաւարի, այսպէս և սակս այլոց մոլորակացն գիտելի է: Դարձեալ, աղտն, որ է յերեսս Հուանին, ոչ այլ ինչ է, եթէ ոչ տիպ Երկրիս, զի է հայելի ստորնոցս, վասն առաւել մեծ գոլոյն ի նոսա պարզագոյնքն ծովուց և մթագոյնքն Երկրիս²¹:

ՅԱՂԱԳՍ ԱՄՊՈՑ ԵՒ ՄԻԳԱՅ ԵՒ ՄԱՐԱԽԼԱՑ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԵՐԵՒՄԱՆՅՆ, ՈՐ ՅԵՐԿԻՆ

[Ե]

Ամպ է գոլորշի թանձրատեսակ, քարշեալ զօրութեամբ Արեգականն ի ծովուց և յայլ գիճային տեղեաց: Իսկ մէգ է, որ մնայ անձրևաբար ամպոց, սա է նըշան պարզութեան ըստ Արիստոտէլի: Իսկ մարախուղն մըթագոյն գոլորշի անձրննդական ջուրց, զոր բազումք մէգ անուանեն: Սա նախ քան զդառնալն ի յամպ և կամ ի յանձրև, մղի ի վայր կոյս և մնայ մերձ Երկրի:

//(250բ) Աղեղն, որ ծիածան ասի, է տիպ Արեգականն, որ երևի ի գիճային օդս, դէմ եղեալս նմա, և զանազանի գունոցն, որ ի նմա է ընդ տարերցս: Բակառումն Արեգականն և Հուանի և այլոց աստեղացն պատճառի ի մնացեալ ամպոց, զի մնացել ամպքն յինքեանս քարշեն զլոյս մոլորակացն բոլորած և սպիտակափայլ. և լոյս ասեն ոմանք նշան պարզութեան գոլ:

Գիսաւոր աստղ է գոլորշի ինչ վառեալ ի տարրական հրոյն, ըստ նիւթոյն չափու: Սա նշանակ է ըզփոփոխումն թագաւորաց:

Թռիչ աստղն, որ և սա է վառեալ գոլորշի, բռնութեամբ հողմոյն վարեալ լինի, և երևի որպէս աստղ ինչ թռուցեալ: Եւ լինի սա կրկին կերպիւ. մինն ի վայր կոյս բերի, և միւսն ուղղակի դէմ առ դէմ: Լոյսն, որ ի գիշերի երևի, է գոլորշի ինչ նուստագոյն յօդս, և ի վրդովմանէ հողմոցն վառի և յամէ սակաւ ժամանակս:

Իսկ յաղագս լոյսոյն, զոր միշտ ընդ բազում տեղիս անընդմիջաբար երևի, ասեն ոմանք իջանել յարփույն²²: Եւ ոմանք ի տարրական հրոյն, և այլք՝ յառաջինն լուսոյն:

Փայլակն է շիջեալ հուր ջրով ամպոյն և հողմովն, որ է ի մէջն, //(251ա) վերստին բարբոքէ և արտափայլի: Շանթիքն լինի ի թանձր և ի գէճ գոլորշեաց, որ յամպս և ջերմութեամբն խըտանայ, զի է բնութեամբ հրոյ և զօրութեամբ հողմոյն, ընդդէմ բնութեան ի վայր բերի, և ասի կայծակն:

Նետ է գոլորշի ինչ վառեալ և մխեալ ի մերձակայ ամպս, յոյժ եռացմամբ ի վայր բերի:

Որոտն լինի ի գէճ և ի չոր գոլորշեաց, զոր խառնեալ վերանան յերկրէ, զի այն, որ է գիճային, լինի ամպ, իսկ չորն, նեղեալ զծալմունս ամպոյն, պատառէ և բռնութեամբ արտահոսի և առնէ որոտ և փայլակն: Եւ նախ է որոտն քան զփայլակն: Բայց նա նախ տեսանի, զի է ըստ բնութեան²³:

Յուպ է տիպ Արեգականն, որ լինի ի գէճ ամպս, որպէս զաղեղն: Բայց սա է ուղղակի, զոր ոմանք խոցքի ասեն, և այլք ըողոս:

Անձրև է, որ լինի ի տարալուծմանէ գիճային ամպոց: Իսկ ձիւն է, որ ծնանի ի ջերմացեալ ամպս, զոր պաղեալ լինի, իսկոյն ընդ փոխիլն ի ջուր, և սորին մասնկունքն ոչ խտանան, այլ գործեալ լինին ի ներհակ հողմոցն փլրփրատեսակ:

Կարկուտն ծնանի ի ջերմ ամպս, զոր զօրութիւն Արեգական քարշեալ լինի, և զկնի լուծա/(251բ)նելոյն ի ջուր գայ ի միջի ներ կայարանի օդոյդ և պաղի: Սառն է ջուր պաղեալ: Յօղ է գիճութիւն, որ ի պարզոյ իջանէ ըստ անօսր լինելութեան և ի շիթս մանրամասնեայս բաժանի: Եղեամն է ցօղ կիսասառոյց:

ՅԱՂԱԳՍ ՀՈՂՄՈՑ: ԴԱՐՁԵԱԼ ԻԻՐՈՅՆ ՏԵՂԵԱՅ ԵՒ ԱՅԼ ՄԱՍՆԱԻՈՐ ԻՐԱՅ ՊԻՏԱՆԱՅՈՒԱՅ

Ը

Հողմն լինի ի չոր և ի ծխատեսակ գոլորշեաց, որ վերանան յերկրէ: Եւ բաժանի ի չորս՝ յարևելեանն, յարևմտեանն, ի հիւսիսայինն եւ ի հարաւայինն: Եւ սոքա իւրաքանչիւրքս դարձեալ բաժանին յերիս:

Արդ, այնոքիկ, որ արևելեանքն են, հասարակ եւրոսք կոչին²⁴: Եւ արևմտեանքն զեփիւռք: Հիւսիսայինքն՝ վօռէք: Իսկ հարաւայինքն նօտոսք: Արևելեանքն մէջ ունին զապէլիօղն, որ է յոյժ բարեխառն: Եւ հիւսիսային կողմն է զկէկիասն, որ շնջէ յամառնային եղանակն: Եւ է սա յոյժ ցամաքեցուցիչ: Իսկ ի հարաւային կողմանէ ըզբերոսն, որ շնջէ ի ձմեռային եղանակն: Եւ է սա յոյժ գիճացուցիչ:

Արևմտեանքն մէջ ունին զգեփիւոն, որ է եռացուցիչ երկրի: Եւ ի հիւսիսային կողմանէ զարգէստէսն, որ շնչէ յամառնային եղանակն և առնէ զամպս:

//(252ա) Իսկ ի հարաւային կողմանէ զլեփոն, որ շնչէ ի ձմեռնային եղանակն և առնէ անձրև: Հիւսիսայինքն մէջ ունին զապարքտիասն, որ առնէ զկարկուտս: Եւ յարևելեան կողմանէ զվօռեազն, որ է յոյժ անձրևաբեր: Իսկ յարեւմտեան կողմանէ զթրասկիասն, որ կազմէ զձիւնսն: Հարաւայինքն մէջ ունին զնօտոսն, որ է յոյժ անձրևաբեր: Եւ ի յարևելեան կողմանէ զեւրոնօտոսն, որ է ջերմ և հալէ զձիւնս: Իսկ յարևմտեան կողմանէ զղիւօնօտոսն, որ առնէ զամպ և զմէգ:

Իսկ յաղագս շարժման գիտելի է, զի շարժն լինի ի թանձր գոլորշեաց յարգելելոց յերկրի, զոր ի խնդրելն իւրոց յելս դողացուցանեն զերկիր և բռնութեամբ արտահոսին: Եւ մրրիկն լինի ի ներհակ հողմոցն պատահելոցն առ միմեանս:

Դառնութիւն ջուրց ծովուն պատճառի յԱրեգակնէն, զի ջերմութիւն Արեգականն ի վեր ամփոփեալ քարշէ զքաղցրութիւն, որ է ի նմա և մնայ միայն դառն և աղին:

Ջերմութիւն ջուրցն լինի ի հրոյ երակացն, որ թաքուցեալ են ընդ երկրաւ, զոր ի մերձ գոլն առ նոսա ջերմանան ջուրքն: Իսկ առաւելութիւն և նուազութիւն ըստ հեռաւորութեան և ըստ մերձաւորութեան դիպի:

Աղբեր ակունքն, որք են ի լերինս, պատճառին յայլոց լերանց բարձրագոյն// (252բ) նից հեռաւորաց, և կամ, որպէս ասեն, ծործորք գոլով ի ներքուստ

կուսէ, դիւրաւ ելանեն ջուրք ծովուն: Իսկ ի ձմեր-
նային և յամառնային եղանակին զջերմ և զցուրտ
գոլն սոցին առնէ Արեգակն, զի ի հեռանալ և ի
մերձենալ Արեգականն առ սակաւ սակաւ ջերմա-
նան և ցրտանան:

ՅԱՂԱԳՍ ԹԷ ԶԻՆՉ Է ԱՆՁՆ ՄԱՐԴՈՅ²⁵
ԸՍՏ ՍԱՀՄԱՆԻՆ

[Թ]

Զի որպէս ոչ մի և նոյնպէս բնաւորեալ են գոլ
մտաց կարողութիւնք ըստ խառնուածոցն, այսպէս և
բանքն ըստ ախորժակաց: Եւ այս ոչ միայն յայլ և
այլ իրս, այլ և ի վերայ միոյ իրի, քանզի ոչ մի և նոյն
եղանակաւ տեսանին, որպէս և արտադրութիւնքն
անձին, զի ոմանք տան նմա սահման ըստ համե-
մատութեան, և այլք՝ ըստ զօրէղութեան և ըստ զա-
նազան զօրութեան:

Վասն զի սահմանեն զնա ոմանք այսպէս: Հոգին է
իմանալի գոյացութիւն և բանական, ստեղծեալ
յոչընչէ առ ի կենդանացուցանել զմարդկային մար-
մինն: Եւ ոմանք այսպէս. հոգին է իմանալի գոյա-
ցութիւն, ընդունակ լուսաւորութեանց՝ վերջին առն-
չութեամբ: Իսկ ոմանք, եթէ հոգին է կատարո-
նութիւն առաջին մարմնոյ բնաւորականի, գոր-
// (253ա) ծարանականի զօրութեամբ կենդանութիւն
ունօղի: Եւ այլք եթէ հոգին է կերպիւ ինչ ամենայն:
Եւ այսպէս զանազանաբար ըստ զանազան ախոր-
ժակաց մտաց եղեալք գոն, որպէս ասացաւ:

Իսկ զօրութիւնք հոգւոյն բաժանի յերիս ըստ սե-
նորէն բաժանման, այսինքն ի տնկականն, ի զգա-
յականն և ի բանականն: Եւ զօրութիւնքս այսոքիկ ի
զանազան ենթակայս ասին զանազան հոգիք, քան-
զի տնկականն ի տունկս գոլով՝ ասի տրնկական
հոգի: Եւ զգայականն ի զգայունս գոլով՝ ասի զգայա-
կան հոգի: Իսկ բանականն ի մարդս գոլով՝ ասի
բանական հոգի: Այլ սոքա երեքեանս են ի մարդն
միութեամբ, բայց զանազանեն զօրութեամբ: Վասն
որոյ ոչ է արժան ասել ի մարդն հոգիք, այլ զօրու-
թիւնք, զի երեքեան սոքա յառաջ գան յէութեան
հոգւոյն, բայց ոչ միանգամայն, այլ մի զկնի միոյ, զի
ոմն տա նախկնաբար զկեալն: Եւ ոմն ըզկնի զզգա-
լոյն, իսկ ոմն հուսկ ետոյ զբնաւորիլն, և այսպէս
ըստ կարգի բնութեան յառաջանայ մինն քան
զմիւսն իբր յանկատարելութենէ ի կատարելութիւն:
Եւ դարձեալ ի սոցանէ ոմանք մինչեւ ի մարմնի ներ-
գործեն և հանդերձ մարմնով, և ոմանք առանց
մարմնոյ և զկնի անջատման:

**ՅԱՂԱԳՍ ԹԷ ԶԻՆՉ Է ՏՆԿԱԿԱՆ ՀՈԳԻՆ ԸՍՏ
ՍԱՀ// (253բ) ՄԱՆԻ ԻԻՐՈՅ ԵՒ ԹԷ ՈՐՔԱՆ ԵՆ
ԶՕՐՈՒԹԻԻՆՔ ՆՈՐԱ**

Ճ

Տնկական հոգին է էութիւն իմանալի, տեսակ
բընական մարմնոյ: Եւ ունի երիս զօրութիւնս,
այսինքն զանընդականն, զաճողականն, զծնընդա-
կանն: Եւ սոքա իւրաքանչիւրքս ունին յատուկ յա-
ռաջ եղեալս ինքեանց: Զի սըննդականն ունի

զկերակուրն եւ աճողականն զայս քան մարմինն: Իսկ ծննդականն՝ զսերմն: Բայց գիտելի է, զի Ալպերթիոս²⁶ և այլք նախ դնեն ըզծննդականն զօրութիւն քան զսննդականն: Եւ այս իբր զի լինելն նախ է քան զսննանիլն: Բայց լինել ի ծնողաց պատճառի և ոչ ի ծնիցելոյն, զի ի ծնիցելումն նախ ներգործէ սննդականն, քան զաճողականն և զծննդականն: Վասն զի անհնար է առանց պատշաճ քանակին, որ լինի աճողականաւն և սննդականաւն ներգործել ծննդականին, զի ոչ գոյ ծնունդ, ուր ոչ է սնունդ, և ոչ անդրադարձեալ: Եւ գիտելի է, զի սննդականն, որ է նախկին ի մասունս տնկականին, ունի չորս զօրութիւնս, այսինքն զքարշողականն, զպահողականն, զհալողականն, որ է փոխարկողականն, զարտաքսականն, որք են առիթք կենդանութեան, զի առանց սոցա ոչ է կար կենդանույ գոլ, //(254ա) վասն որոյ սննդականն ի մէջ այլոց զօրութեանցն միշտ ներգործութեամբ գոլով պահէ զկենդանին, զի սովաւ գոլ և քանակ նորին պահի:

ՅԱՂԱԳՍ ԹԷ ԶԻՆՉ Է ԶԳԱՅԱԿԱՆ ՀՈԳԻՆ ԸՍՏ ՍԱՀՄԱՆԻՆ ԵՒ ԹԷ ՈՐՔ ԵՆ ԶՕՐՈՒԹԻՒՆՔ ՆՈՐԱ

ԺԱ

Զգայական հոգին է էութիւն իմանալի, տեսակ բնական մարմնաճանաչողական: Եւ բաժանի յերկուս, այսինքն ի յըմբռնողականն և ի շարժողականն ըստ Ալպերթիոսի²⁷: Ի սոցանէ ոմն է զգայութիւն և ոմն զօրութիւն զգայականին և ոչ զգայութիւն:

Եւ բաժանի զգալութիւնն յերկուս, այսինքն ի ներքինն և յարտաքինն: Արտաքին զգալութիւնք են հինգ, այսինքն տեսանալիք, լսելիք, հոտոտելիք, ճաշակելիք, շօշափելիք: Եւ սոքա իւրաքանչիւրքս ունի առանձին գործի, կամ զգայարան և ենթակայ, կամ յառաջ եղեալքս:

Զի տեսանելեաց գործի կամ զգայարան, էական և ենթակայ, կամ յառաջ եղեալ է գոյնն: Լսելեաց գործի կամ զգայարան է ունկն, և ենթակայ կամ յառաջ եղեալ հնչումն: Հոտոտելեաց՝ ունչն և հոտն: Ճաշակելեաց՝ քիմն և համն: Շօղափելեաց՝ բոլոր մարմինն և շորս որակութիւնք, //(254բ) և հասարակ ամենեցուն սոցա յառաջ եղեալ՝ քանակ, առինչ և շարժութիւն:

Եւ միջոց է սոցա երկու, այսինքն ներքին և արտաքին: Ներքին է մարմին, և արտաքին օդն: Եւ ամենայնքն սոքա ունին չափս և սահմանս ի ներգործելն, զի արտաքոյ քան զսահմանն անցեալ կորուսանեն զներգործութիւնս իւրոց: Վասն զի ոմանք բոլորովին մերձ գոլով ներգործեն և ոմանք ոչ, ոմանք ուղղակի և ոմանք ոչ: Ոմանք տեղական շարժմամբ ըստ գործեացն կամ ըստ զգայարանացն և ոմանք ոչ: Նոյնպէս և ներքին զգալութիւնք են հինգ, այսինքն՝ հասարակ զգալութիւն, երևակայութիւն, կարծիք, տրամախոհութիւն և յիշողական: Հասարակ զգալութիւն է, յոր վերածին զգացեալքն ամենայն: Յատուկ զգալութեամբք, վասն զի իւրաքանչիւրոք ի մասնաւոր զգալութեանց ըմբռնէ միայն զյատուկ յառաջադրեալն իւր, և ոչ զմիւսոյն, զի տեսանելիքն ենթադատէ միայն զգոյնն, որ է

յատուկ յառաջ եղեալ իւր, և ոչ զձայնն, որ է լսելեացն: Այլ հասարակ զգայութիւնն ոչ զգոյնն, այլ և զձայնն և զջերմութիւն և զայլսն, զի առ սա վերածին ամեն տեսակք իրողութեանց առանց նիւթոյ, և ըստ այսմ ասի հասարակ զգայութիւն: Եւ դնի սա ի յառաջին //(255ա) կողմն գլխոյն ի տեղի խոնաւուտ, զոր ընդունի գութով և թողու նմանապէս:

Երևակայական զօրութիւն է զօրութիւն ընդունական, ի յորում պահին նմանութիւնք իրաց, զի թէպէտ և հասարակ զգայութիւնն ընդունի զնրմանութիւնս զգալի իրաց, այլ մերձ գոլով իրին միայն: Իսկ երևակայութիւն և հեռացեալ երևեցուցանէ յինքեան, զի ի նմայ են և ի նմա պահին ամեն տեսակք զգալեաց: Վասնորոյ կոչի գանձարան նմանութեանց: Եւ դնի սա յետին մասն առաջին փորուածոյն ի տեղի ցամաքային:

Կարծողական է զօրութիւն, որ ի յընկալեալ տեսակէն ի ձեռն հասարակ զգայութեան և երևակայութեան հանէ դիտաւորութիւն իմն, իբր օգտակար ինչ գոլ, կամ վնասակար, զոր նոքօք ոչ լինի, քանզի ի նոցանէ ոմն միայն ըմբռնէ և ոմն միայն պահէ: Այլ սա, յետ որոնման վերահասու լեալ, հանէ դիտաւորութիւն իմն ի նմանութեանցն յայնցանէ, և դնի սա ի յառաջին մասն միջի փորուածոյն ի տեղի ջերմային:

Տրամախոհութիւն է զօրութիւն, որ բաղադրէ ըզբնութիւնս իրաց ընդ իրեարս, որպէս ի մարդոյ և ի կապկէ առնէ զմարդակապիկն, և ներկայիւս հոգւոյ զապառնիս //(255բ) խոտէ զայս և առնէ զայն և դնի սա յետին մասն միջի փորուածոյն, մէջ

երևակայականին և յիշողականին, զոր դարձուցանելով զինքն ի վերայ տեսականցն, որ յերևակայութենէ և ի վերայ դիտաւորութեանցն, որ պահին յիշողականն, բաղադրէ և բաժանէ:

Յիշողական է, որ պահէ զարտաքարշեալն դիտաւորութիւնսն ի ձեռն կարծեաց յըզգալի իրողութեանց, յորս հայի տրամախոհութիւնն:

Արդ հասարակ զգայութիւնն միայն դատէ զամենայն յառաջ եղեալս մասնաւոր զգայութեանց՝ մերձ գոլով նոցա: Իսկ երևակայութիւնն և հեռի գոլով պահէ զտեսակս իրաց:

Կարծողականն հանէ դիտաւորութիւն իմն ի տեսականցն յայնցանէ: Եւ յիշողականն պահէ զայնոսիկ: Իսկ տրամախոհականն բաղադրէ ընդ միմեանց, զոր պահէ յիշողականն, քանզի բաղադրէ գոչ ներկայս ընդ ներկային, և ընտրէ զօգուտն և զվնասն, և զգուշանայ:

Եւ գիտելի է, զի որպէս երևակայութիւն է առ կարծիսն, այսպէս և յիշողականն է առ տրամախոհութիւն: Բայց զանագանին, զի երևակայութիւնն պահէ զտեսակս իրաց: Իսկ յիշողականն զդիտաւորութիւնս տեսակաց: Այսպէս և տրամախոհականն զանագանի ի կարծողականէն, զի կարծողականն բաղդատէ ըզտեսակս ընդ նիւթոյ, և զգոյնն ընդ գունոյ, իսկ նա //(256ա) ըզդիտաւորութիւնս ընդ դիտաւորութիւնս: Սա ներկայ ընդ ներկայի, իսկ նա ներկայ ընդ ապառնոյ: Սա ի ձեռն մասնաւոր զգայութեանցն պահեալ նմանութեամբ ենթադատէ, իսկ նա ի ձեռն սորին պահել դիտաւորութիւնսն: Սա թարց յիշողականին, իսկ նա յիշողականան: Սա ոչ ընդհանուր, իսկ նա զընդհանուրս ևս:

Իսկ նա, որ ոչ է զգայութիւն, այլ զօրութիւն զգայականին, պատճառի ի ճանաչողական զօրութեանց: Վասն զի ճանաչողական զօրութիւնքն նախ են քան զշարժողականն, ուստի թէ շարժողականն յառաջանայ քան զճանաչողական զօրութիւնսն, այն ոչ է ըստ յատկութեան շարժողականին, զի շարժողականն ոչ է հասարակ առ հակակայսն, այլ առ մինն: Իսկ ճանաչողականն միապէս ի խորշելիս և յոչ խորշելիս:

Եւ սորա են ներգործութիւնք երկու, զի երբեմն ներգործէ անմարմնապէս, և երբեմն ըստ մարմնոյ: Ըստ առաջնոյն ասի յոժարական և բաժանի յերկուս, այսինքն՝ ի ցանկականն և ի ցասմնականն: Յանկական է զօրութիւն անձին, որով յօժարի ոք առ բարին, և փախչի ի չարէն: Եւ յերկաքանչիւրոցս յայսցանէ լինին չորք կիրք, քանզի եթէ ներկայ է բարին, է խնդութիւն, և եթէ ապառնի՝ է յոյսն: Նոյնպէս եթէ մերձ է չարն՝ է ցաւն, և եթէ հեռի՝ երկիրդն: Իսկ ցասմնական է զօրութիւն անձին, //(256բ) որովք ընդդիմանայ այնոցիկ, որ խափանեն զգնացսն առ յօժարելի բարին: Եւ է սա իբր նպաստ ցանկականին, զի յարգելովն զհեշտալին, յորում ցանկականն յօժարի, ցասնու և տրտմի: Եւ սորա գործարան է լեարդն, իսկ միւսոցն սիրտն:

Իսկ ըստ երկրորդին է շարժողականն, որ բաժանի և սա յերկուս, այսինքն ի նկատողն ի կամս և յոչ նկատողն ի կամս: Նկատող ի կամս, որպէս գործել և կաքաւել, և ոչ նկատող ի կամս, որպէս աճիլ և սնանիլ:

Եւ զի յօժարականին ևս շարժողական ասացաք, ոչ եթէ ըստ մարմնոյ ինչ, այլ իբր յօժարիլն է, որպէս շարժիլ, քանզի շարժութիւն իսկապէս ի շարագրեալ

անդամս է տեսանել, և ոչ անտ, ուր ոչ իցէ շարադրութիւն անդամոց: Եւ սորա գործարան են հավաքմունք ջըլացն, որ ի յետուստ կուսէ գլխոյն:

ՅԱՂԱԳՍ ՍԱՀՄԱՆԻ ԲԱՆԱԿԱՆ ՀՈԳԻՈՅՆ ԵՒ ՈՐՔԱՆՈՒԹԵԱՆՅ ԶՕՐՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ

ԺԲ

Բաւականապէս յառաջագոյն յաղագս սահմանի բանական հոգւոյն ասացաք, այլ աստ կրկնեսցի դարձեալ վասն երկու պատճառի: Մի, վասն պահպանութեան կարգին, և միւսն՝ վասն առաջիկայ բանիս: Արդ, սահմանի բանական հոգին այսպէս, բանական հոգին է էութիւն իմանալի, տեսակ բնական մարմնոյ, ճանաչող //(257ա) ըզգալիս և զիմանալիս:

Սահմանս այս պարունակեալ ունի յինքեան զտնկականն և զգայականն: Եւ յայտ է ի զանգանութեանցս յայսցանէ, քանզի տարբերութեամբս այսու էութիւն իմանալի, տեսակ բնական մարմնոյ, պարունակէ զտնկականն, և ճանաչող զգալիսն յաւելեալ պարունակէ զգգայականն: Իսկ զիմանալիսն յաւելեալ ցուցանէ բանականին միայնոյ գոլ զայս սահման, յորում պարունակի էութիւն նորին, տարրորոշեալ յայլոց: Ապա յայտ եղև եթէ բնական հոգին պարունակալ ունի յինքեան զտնկականն և զսգայականն, այլ սակայն ըստ առաջնոյ ասացելոյն եղանակի:

Բայց գիտել պարտ է, զի որպէս տնկական զօրութիւնքն ոչ են սատակ տնկական ի զգայունս, որպէս

ի յատուկ ենթակայս իւրոց, այլ անբաժ և խառն ներգործեն, այսպէս և զգայական զօրութիւնքն ի բանականումն, քանզի որ ինչ ներգործութիւնք ի զգայունս հնազանդին զգայական կամաց, ի բանականում առանց բանի ոչ են: Ուստի զանազանապէս ներգործութիւնք են ի բանականում, զի ոմանք են թարց բանի և ոմանք բանիւ հանդերձ: Իսկ ոմանք ոչ ըստ այսոցիկ, այլ են բանք: Արդ թարց բանի է տնկականն, և հանդերձ բանիւ՝ ներգործութիւնք ոմանք զգայ/(257բ)ականք, որպէս լսել և յօժարիլ: Իսկ բանք, կարծիք և տրամախոհութիւն, որովք շարժի բանականն ի գործ, միովն զմասնականս և զներկայս հանդերձ պարագայիւք դատելով, իսկ միւսովն զընթանուրս և զմասնականս, զներկայս և զապառնիս: Վասն զի ներգործութիւնք են սոքա իմացականք, որ և ասին մասնաւոր բանք, այլ և բանականին առաջարկութիւն տրամախոհութեան: Եւ համաձայնին սոքա և զանազանին ըստ առաջնոյ ասիցն:

Իսկ միւսոյն բանիս այլ և զայս գիտելի է, զի յիշողական ևս ըստ զգայականին է ի բանականում, այլ զանազանապէս, զոր անբանք ոչ ունին զնոյնն: Եւ զի այսոքիկ իմացականին շարժողական զօրութեանն են ներգործութիւնք, այսինքն կարծիք, տրամախոհութիւն, իմացումն, յիշումն, վերստին յիշումն, քանզի իմացականին երկու են զօրութիւնք, այսինքն ճանաչողական և յօժարական: Ըստ ճանաչողական գոլոյն ասի ըմբռնական, և ըստ յօժարութեան՝ շարժողական:

Եւ գիտելի է, զի երկու են ներգործութիւնք իմացականին, որոց մինն է բան, իսկ միւսն իմացումն,

զի ըստ պարզապէս իմացման իմացումն ասի: Իսկ ըստ բանի՝ բանական, այլև ներգործութեամբ զիմանալիսն առնելով՝ առնողական, //(258ա) իսկ ըստ կարելոյն զնոսա յինքն՝ կարողական: Եւ այս զանազանութիւն է իմացականին ըստ բնութեան: Իսկ յիշելով զոչ մոռացեալսն թարց պարագայից և կամ հանդերձ պարագայիւք զմոռացեալսն մասամբ յիշումն ասի և վերստին յիշումն ըստ Գրիգորի²⁸:

Իսկ շարժողականին, որ է նոյն ինքն յօժարականն, և ասեն երկու ներգործութիւնք, որոց մինն է ցանկական և միւսն ցասմնական: Եւ զի սոքա ոչ են երկու զօրութիւնք, զի ոչ բազմանան յիմացականն ճանչողական զօրութիւնք, որպէս ի զգայականն, այլ ըստ ցանկութեան բարւոյն և ըստ մարտնչելոյն ընդդէմ չարին, կրկին անուամբ յորջորջի, զի յառաջ եղեալք սոցին են աստուածայինք, որք ոչ են ընդ զգայութեամբ իւրք: Եւ կոչի սա անձնիշխան ըստ այնմ որ ընտրէ զմիջոցն, որով ածի ի վախճան, իսկ կամք՝ յորժամ նկատէ ի վախճանն:

ՅԱՂԱԳՍ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆՈՒԹԵԱՆՅ ՀՈԳԻՈՅՆ, ՈՐՔ ԵՆ ՈՐԱԿՈՒԹԻՒՆՔ ՆՈՐԻՆ

ԺԳ

Գիտել պարտ է, զի չորիւք եղանակօք ասին որակութիւնք: Առաջինն՝ մարմնականն, երկրորդն՝ իմացականն, երրորդն՝ բնազանցական, չորրորդն՝ բարոյական: Մարմն//(258բ)նական որակութիւնք են

այսոքիկ, առողջութիւնք, հիւանդութիւն, գեղեցկութիւն, այսինքն գեղութիւն, ընթացականութիւն, և մարտկութիւն: Առողջութիւն լինի ի բարւոք խառնուածոց և ի սորին ներհակաց հակակայն: Գեղեցկութիւնն լինի ի բարւոք շարադրմանէ անդամոց և ի սորին ներհակաց ներհակն: Ընթացականութիւն և մարտկութիւնն լինին ի յաջողակ անդամոց դիպմանէ: Եւ ասացեալքս զանազանապէս գոն, զի են ի տարբերս բնական և ստացական:

Իմացական որակութիւնք են այսոքիկ՝ իմաստութիւն, հանճար, գիտութիւն, խոհեմութիւն եւ արուեստ: Իմաստութիւն է աստուածայնոցն, որ է վերջին հայեցմամբ առ բոլոր մարդկային ճանաչումն:

Հանճարն է [իմացումն] բնական սկզբանց, որ ընկալեալ լինի յիմացականէն ի նոյն կէտն, յորժամ իմանայ զմեծն և զփոքրն: Գիտութիւն է եզրակացութեանցն, որ խորհրդով բանին լինի ծանօթ, զի է ի վերջին սեռ ինչ, որպէս շարժելին ի սեռս բնականաց, քանզի նախկինս և վերջինս եղիցին այլովք ծանօթ:

Խոհեմութիւնն է գիտութիւն բարեաց և չարեաց, տիրելով զմինն և ատելով զմիւսն: Արուեստն է գիտութիւն՝ ուղղակի գործ գործելեաց:

Ի սոցանէ ոմանք եղիցին տեսականք, և ոմանք //(259ա) գործնականք, ոմանք կատարեալ առաքինութիւնք և ոմանք ոչ: Զի կատարեալ առաքինութիւն է, որ զունօղն և զգործ նորին արասցէ բարի: Արդ այսոքիկ յետնոցն յարմար, իսկ առաջնոյն՝ ոչ:

Եւ բնագանցականք են այսոքիկ. հաւատ, յոյս, սէր: Հաւատն է հաստատութիւն անտեսանելեաց: Յոյսն է շարժում իմն, զոր դեռևս ոք ոչ ունին: Իսկ սէրն է տեսանելեաց և ունելեաց յօժարումն: Եւ սոցա տեղիք են զանագանք, զի հաւատն ի միտսն է, յոյսն՝ ի ցասմնականն, և սէրն՝ ի ցանկականն:

Իսկ բարոյականք են այսոքիք. խոհեմութիւն, ողջախոհութիւն, արիութիւն և արդարութիւն: Խոհեմութիւն, ըստ Արիստոտէլի, է ուղիղ բան առնելեաց: Եւ բաժանի յերիս, այսինքն ի բարոյականն, ի տնտեսականն, ի քաղաքականն: Ողջախոհութիւնն է, որ կարգաւորէ զհոգին շուրջ զմարմնական հեշտութեամբ: Եւ բաժանի յերիս, այսինքն ի ժուժկալութիւն, յանոխակալութիւն և ի համեստութիւն: Արիութիւնն է ընդդէմ նուաստագունիցն և բարձրագունիցն: Եւ բաժանի ի չորս. ի մեծագործութիւն, ի համարձակութիւն, ի համբարձութիւն և ի յարամնայ/(259բ)ութիւն:

Արդարութիւն է իրի իմիք հաւասարաբաշխութիւն: Եւ բաժանի սա, ըստ Արիստոտէլի, յերիս, այսինքն ի կրօնաւորութիւն, ի գթութիւն և ի շնորհս: Արդ, ամենայն բարի կենցաղավարութիւն գտանի ի չորս առաքինութիւնս այս: Եւ են սոքա ընդդէմ չորից կրիցն, այսինքն տրգիտութեան, բարկութեան, ցանկութեան, չարութեան: Եւ զի՞նչ են բարի կենցաղավարութիւնք. ունել զբարին և տոկալ չարեաց: Վերջ է:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Միակ ձեռագրով պահպանված Սարգիս Բերիացու երկը (Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ N 2361, էջ 240ա-259ա) գրված է դժվար ընթեռնելի, շատ մանր նոտրգրով, երկի և նրա բոլոր գլուխները՝ կարմիր թանաքով: Հեղինակը բաժանել է իր աշխատությունը տասներեք գլուխների (Ա-ԺԳ), որոնց համարակալումը դրված է տեքստից դուրս՝ լուսանցքներում, գլխի սկզբնական բառին ընդհուպ: Վերնագրերի կարմիր թանաքը տեղ-տեղ գունաթափված է և դարձել է դժվար ընթեռնելի կամ անընթեռնելի: Լայնորեն կիրառում է հապավումներ, որոնք սակայն չեն խոչընդոտում վերծանմանը և համատեքստի յուրացմանը:

Գրառաջջանին բնորոշ երկար նկարագրական վերնագիրը հեղինակն ավարտում է «սակա վարժման անձին իւրոյ» բառերով, զգուշացնելով ընթերցողին, որ գրված է անձնական պարապունքների համար և հավակնություն չունի լայն տարածման: Սակայն նրա բովանդակությունը խոսում է հեղինակի խոր գիտելիքների և իր ժամանակի փիլիսոփայական գրականությունը քաջաձանոթ լինելու մասին:

2. Առաջին գլխի վերնագիրը, որը համահունչ է երկի վերանգրին, մենք օգտագործել ենք սույն հրատարակման համար՝ «Յաղագս աշխարհի և այլ մասնաւոր իրաց»: Նկատի ենք ունեցել, որ այն բովանդակում է «աշխարհի մասին» ընդամենը 6 տիեզերաբանական գլուխ (Ա-Զ), այնուհետև 2 գլուխ նվիրված օդերևութաբանությանը (Է-Ը), իսկ մնացած հինգ գլուխները (Թ-ՇԳ) հատկացված են հոգեբանությունը՝ ավանդական իմաստով «հոգու մասին ուսմունքին»: Այդ պատճառով ընդհանուր վերնագրում պահպանել ենք «և այլ մասնաւոր իրաց» բառերը, քանի որ ողջ բովանդակության կեսից ավելին նվիրված այդ «մասնավոր իրերին»:

3. Հեղինակը նկատի ունի Արիստոտելի «Ստորոգություններ» («կատեգորիաներ») աշխատությունը, որտեղ հենց սկզբում, առաջին պարբերությունում խոսվում է «հոմանունների»

մասին: Այդ երկը հայերեն թարգմանությունը գոյություն ունի հնուց, 6-րդ դարից, և լայնորեն տարածված էր հայ իրականության մեջ: «Ստորոգությունք Արիստոտելի» տե՛ս Կորին, Մամբրէ, Դաւիթ, Մատենագրութիւն Նախնեաց, Վենետիկ, 1833, էջ 359-408:

Սարգիս քահանան հետևում է Արիստոտելի պահանջին՝ տարբերակել համանուն, բայց տարբեր նշանակություն ունեցող հասկացությունները (տե՛ս նաև «Անանուն մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի», Երևան, 1961, էջ 2-3):

4. Պորփյուր (232-304 թթ.) – նորպլատոնականության ականավոր ներկայացուցիչ, ծագումով ասորի (իսկական անունն է Մալխո): Հայտնի է որպես Արիստոտելի երկերի մեկնաբան, հատկապես նրա «կատեգորիաների» մեկնիչ, որը միջնադարում լայնորեն տարածվել էր «Ներածութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի» վերնագրի տակ: Հայերեն թարգմանվել էր դեռևս 6-րդ դարում, Արիստոտելի «Ստորոգութեանց» և «Յաղագս մեկնութեան» հետ միասին: Պորփյուրի «Ներածութեան» մեկնություններ են գրել Դավիթ Անհաղթը, Անանուն մեկնիչը, Վահրամ Ռուբունին, Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին այլ փրիլսոփաներ:

5. Դավիթ Անհաղթ (5-6-րդ դդ.) – հայտնի հայ փրիլսոփա: Գրել է Պորփյուրի «Ներածություն» ընդարձակ մեկնություն, որին քաջ ծանոթ է Սարգիս Բերիացին:

6. Գրիգոր Նյուսացի (4-րդ դ.) – պատմության մեջ հայտնի են բազմաթիվ «սուրբ Գրիգորներ» (Գրիգոր Լուսավորիչ, Գրիգոր Նազիանզացի, Գրիգոր Տաթևացի, Հոռոմի մի քանի պապեր և այլն): Այստեղ խոսքը սուրբ Գրիգոր Նյուսացի եպիսկոպոսի մասին է, որը երեք մեծ կապաղովկիացիներից մեկն էր (Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նյուսացի, Գրիգոր Նազիանզացի), որի գործերը, ինչպես և մյուս կապաղովկիացիների երկերը թարգմանվել էին հայերեն 5-8-րդ դարերում: Հիշատակվող միտքը մարդու, որպես «փոքր աշխարհի» մասին, գտնվում է Գրիգոր Նյուսացու «Յաղագս կազմութեան մարդոյ» երկում, նրա ժԸ գլխում, որը մինչև վերջերս անտիպ էր: Այն հրապարակվեց

Մատենադարանի ձեռագրերի հիման վրա դոկտոր Ստեյլա Վարդանյանի ջանքերով «Ս. Գրիգոր Նիսացի, Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն», Ս. Էջմիածին, 2088, էջ 117:

7. Հեղինակն այն տեսակետի կողմնակիցն է, որ երկիրը «հաստատուն կանգնած է երկնքի միջին կետում, ունի ձևի այլ ձև, մի քիչ երկայն», այսինքն ի տարբերութիւն խոշոր «կլոր խնձորի ձև ունեցող երկնքի» ավելի շուտ ձվաձև է, բայց այն անշարժ գետեղված է երկնքի կենտրոնում: Պարզ է, որ նա երկրակենտրոն համակարգի կողմնակից է:

8. Տիեզերք ասելով հեղինակը հասկանում է երկրագունդը, որը բաղկացած է երկու կիսագնդերից՝ «կղզիք երկու հանդէպ միմեանց՝ յոյժ լայնանիստք և արձակք»: Սա արդեն նոր ժամանակների պատկերացում է, որն առաջացավ 15-16-րդ դարերի աշխարհագրական մեծ հայտնագործութիւնների հետևանքով:

9. «Նորագիւտ աշխարհ», այսինքն Ամերիկա, որը հեղինակը համարում է մեծ կղզի: Այն դեռևս շունի անվանում, քանի որ երկար ժամանակ, մինչև 17-րդ դարի կեսերը այն կոչվում էր «Նոր աշխարհ» և նրան դեռ չէր կպել նկարագրող-աշխարհագրագետ Ամերիգո Վեսպուչիի անունը, սովերի տակ թողնելով 1492 թ. «Նոր աշխարհը» հայտնագործած Կոլումբոսի անունը: Երկրի գնդաձևութիւն կողմնակից Կոլումբոսը կարծում էր, որ անընդհատ արևմուտք լողալով հասնելու է Հնդկաստանի ափերին, և այդ պատճառով իր հայտնագործած ցամաքը անվանեց «Արևմտյան Հնդկաստան» («Վեստ Ինդիա»): Ամերիգո Վեսպուչին հերքեց այդ տեսակետը, նկարագրեց այն, և իր կամքից անկախ, այդ նկարագրութիւն լայն տարածման պատճառով «Նոր աշխարհը» կնքվեց նրա անունով:

Սարգիս Բերիացուն «Ամերիկա» անվանումը դեռևս ծանոթ չէ: Սակայն հայ հեղինակներից նա առաջինն է, որ հիշատակում է «Նորագիւտ աշխարհը»: Նրանից հետո, մոտ հիսուն տարի անց, այն արդեն գծված է Վանանդեցի եղբայրների «Համատարած աշխարհացոյց»-ում (1695 թ.), սակայն առանց Հյուսիսային Ամերիկայի հյուսիսային մասի մեծ հատվածի:

10. «Որպէս ասէ Արիստոտէլը»: Պարզ է, որ այս խոսքերը չեն վերաբերում «Նորագիւտ աշխարհին», որն անհայտ էր անտիկ հեղինակներին: Արիստոտէլի խոսքը վերաբերում է «մեծ է քանակաւ քան զսա», այսինքն, Արիստոտէլի իմացած աշխարհը՝ եվրոպան, Ասիան և Լիբիան (Աֆրիկան): Ըստ հեղինակի, «քանակաւ» զիջում է «Նորագիւտ աշխարհին»: Պարզ է, որ հեղինակը լավ չգիտի «Նորագիւտ աշխարհի» չափերը և դեռևս ղեկավարվում է կիսահավաստի տեղեւորութիւններով:

11. «Մարդիք» – այսպէս է բնագրում, որը մենք պահպանում ենք ամենուրեք: Սարգիս Բերիացին, որպէս կանոն, հետևում է դասական ուղղագրութեանը, երբեմն միայն շեղվելով դեպի իր ժամանակի առողջանութեանը՝ «մարդիք» (242ա: «Ալպերթիոս» (243ա), «Թափանցիք» (246բ):

12. «Իսկ ծովն, զոր ովկիանոս ասեն»: Նկատի ունի Ատլանտյան օվկիանոսը, որից այն կողմ գտնվում է «Նորագյուտ աշխարհը»: «Ատլանտյան» եզրը Բերիացու մոտ հայցված ձևով դարձել է «անդընդական»: «Բայց որ յԱնդընդականն լինի անուանեալ ձով» (242ա), կապելով այն «անդունդ» բառի հետ:

13. «Մերձ արձանացան Հերակլեայ»: Խոսքը Ջիբրալթարի նեղուցի մասին է, որն «ունի սուղ ինչ բերան առ մուտս Արևու մերձ արձանացն Հերակլեայ»: Հեղինակը նկատի ունի հին աշխարհից հայտնի ժայռը, Հերակլեոս կիսաստված-հերոսի անունը կրող նշանավոր բարձրագագաթը, ժայռասյունները, որոնք եզրափակում էին Միջերկրական ծովի արևմտյան սահմանը և ելքը դեպի օվկիանոս:

14. «Դերհիւսական», այսինքն Անտարկտիկա: Հեղինակը նկատի ունի երկրագնդի «հարաւային» անտես ի մարդկանէ, թագուցեալ ընդ երկրաւ» կիսագունդը՝ իր հարաւային բևեռով, բայց նրան հայտնի չէ Անտարկտիդայի մայրցամաքը:

15. Ձեռագրում գլխի վերնագիրը գրված է կարմիր թանաքով, որը խոնացել է և որոշ տեղերում ջնջվել կամ լղոզվել: Բազմակետերով նշված տեղերը անընթեռնելի են:

16. «Վասն Պօղոսի յափշտակիլ յերրորդ երկինս»: Նկատի ունի Պողոս առաքյալի խոսքն այն մասին, որ ինքը համբարձվեց «երրորդ երկինք» (II Կորնթ. 12.2):

17. Ալպերթոս – Ալբերտոս Մեծ, Ֆոն Բոլշտեդտ (13-րդ դ.) – անվանի փիլիսոփա և աստվածաբան, Դոմինիկյան միաբանության անդամ, Թովմա Ադվինացու ուսուցիչը: Թողել է մեծ գրական ժառանգություն: Հայ միաբանների կողմից (Հակոբ Թարգման, մասնակցությամբ Պետրոս Սրագոնացու) 1344 թ. թարգմանվել է նրա կարևոր երկերից մեկը «Համառօտ հաւաքումն աստուածաբանականի ճշմարտութեան»: Պահպանվել են բազմաթիվ ձեռագիր օրինակներ (եր. Մատենադարան և այլ հավաքածուներ): Խմբագրելով հրատարակել է Մխիթար Սեբաստացին, Վենետիկ, 1715 թ.:

Սարգիս Բերիացին օգտվել է դրա ձեռագիր օրինակից, գլ. Բ, «Յաղագս ստեղծման աշխարհի», որում շարադրված են «Յաղագս բաժանման պարունակաց», «Յաղագս բնութեան երկնից» և այլ բաժիններ, որոնք համառոտել է և ինքնուրույն շարադրել: Այդպես նա վարել է նաև այլ տեղերում, մասնավորապես հոգու տնկական, կենդանական, բանական տեսակների մասին իր շարադրանքում: Մանրամասն նկարագրությունը տե՛ս Հ. Անասյանի «Հայկական մատենագիտություն, հ. Ա, եր. 1959, գրքի 392-399 էջերում, հատկապես 394-395 էջերը: Ալբերտոս Մեծի երկի հայերեն թարգմանության մասին («Գիրք որ կոչի Ալպերտ») տե՛ս նաև մեր “К истории философских школ средневековой Армении”, Ер. 1980, с. 21:

18. Հեղինակն աշխարհի երկրակենտրոն համակարգի կողմնակից է: Երկիրը (հողը), որպես տարրերից ամենածանրը, «խտացեալ կայ հաստատուն ի կէտն միջին անշարժապէս»: Մյուս տարրերից բաղկացած երկինքները, ըստ ծանրության հատկանիշի հաջորդաբար շրջապատում են երկրագունդը՝ գոտիների պես՝ ջրեղեն, օդային և հրեղեն երկինքները: «Իսկ յետ հրոյն՝ եօթն գօտիք մոլորականաց»:

19. Կենդանակերպերի «զանազան բնությունների» մասին, ինչպես և մոլորակներին նվիրված պարբերությունները ակն-

հայտ զուգահեռներ ունեն Հովհաննես Երզնկացուն վերագրվող «Ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք» երկի համապատասխան հատվածների հետ, որը, ինչպես ենթադրում ենք, արաբական փիլիսոփայական հանրագիտարանի (Ռասաիլ Իխվան ալ-սաֆա») համառոտ թարգմանությունն է: Տե՛ս վերջերս մեր հրատարակած «Ի տաճկաց իմաստասիրուց...», Եր. 2009, էջ 44-48, 66-68, 74-76 կն:

Սարգիս Բերիացուն, ամենայն հավանականությամբ, այս բնագիրը ծանոթ է եղել այդ ժամանակ տարածված «Աղաւիտ» անունով ձեռագիր մատյաններից մեկին, որն ընդգրկում է «Ի տաճկաց իմաստասիրաց»-ի մեծ մասը: «Աղաւիտ»-ի մանրամասն նկարագրությունը տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն», հ. Ա, եր. 1959, էջ 540-549.

Բացառված չէ, որ «Աղաւիտ» անհայտ բառը արաբերեն «Իխվան» («եղբայր, եղբայրություն») բառի աղավաղված հայերեն տարատեսակն է: «Աղաւիտ» հայերեն ժողովածուն հիմնականում հանդիսանում է «Իխվան ալ-սաֆա»-ի թարգմանություն:

20. Բնագրում այդպես է՝ «Արեգականն»: Պետք է լինի «Լուանի», որովհետև խոսքը Լուանի խավարման մասին է: Պատահական սխալ է: Անմիջապես հետո հեղինակը խոսում է Արևի խավարման մասին, որի պատճառն է «յանցանելն Լուանոյն ի մէջ մեր և Արեգականն»: Իսկ այստեղ «ստուեր Երկրի ուղիղ գայ ընդդէմ [պետք է լինի] Լուանի [և ոչ թէ Արեգականն] և խաւարեցուցանէ զնա»:

21. Ըստ հեղինակի, Լուանը որպես հայելի արտացոլում է Երկիր վրա եղած ծովերը և ցամաքը, «զի է հայելի ստորնոցս», ընդ որում Լուանի պայծառ, սպիտակ մասերը Երկրի վրա եղած ծովերի արտացոլքն է, իսկ «մթագոյնքն», ավելի մուլթ մասերը՝ ցամաքի:

22. Բացի Արևից հեղինակն ընդունում է նաև արփիի գոյությունը, ինչպես և մի շարք հին հեղինակներ: Խոսքը բոլոր

երկնային գոտիներից վեր գտնվող արփիի մասին է, որի լույսը «ի տարրական հրոյն» է, կամ «յառաջին լուսոյն»: Դա այն լույսն է, որ «միշտ ընդ բազում տեղիս անընդմիջաբար երևի»:

23. Հակասական տեսակետ է: Եթե փայլակը «Նախ տեսանի, զի է ըստ բնութեան», ապա ինչպե՞ս «Նախ է որոտն քան զփայլակն»: Հստակ չեն հեղինակի պատկերացումների լույսի և ձայնի արագությունների մասին:

24. Քամիների անունները տրվում են իրենց հունարեն անվանումներով՝ Էրոսս, զեփիւռ, վօւէք, նօտոս, ապելիօդ, կէկիրաս, արգեստէս, լեփոն, ապարփտիաս, վօւեազ, թրասկիաս, Էրոնօտոս, դիօնօտոս:

Պարզ է, որ հեղինակն օգտվել է օդերևութաբանությանը նվիրված հունական աղբյուրից:

25. Այս և հաջորդ գլուխները նվիրված են հոգեբանությանը՝ հոգու մասին ուսմունքին, և մարդու ճանաչողական ունակություններին: Անձն ասելով հեղինակը նկատի ունի հոգին՝ իր բոլոր կարողություններով և առանձնահատկություններով:

26. Հեղինակը ցույց է տալիս այս և հաջորդ գլուխների բովանդակության աղբյուրը: Դա արդեն իր հիշատակած Ալբերտ Ֆոն Բոլշտեդտ է նրա «Համառօտ հաւաքումն աստուածաբանականի ճշմարտութեան» երկն է, այդ երկի երկրորդ գրքի Լ-Խ^Թ գլուխները: Տե՛ս նաև 17-րդ ծանոթագրություն:

27. Հմմտ. Ալբերդ Մեծի նշվ. երկի ԽԱ, ԽԲ և ԽԹ գլուխները:

28. Հմմտ. Գրիգոր Նյուսացու «Տեսութիւն ի մարդոյ կազմութիւն», գլ. ԺԵ, էջ 105 («Վասն այսորիկ յիշատակն խառնամանեալ եւ կանոնագիտութիւն... բազում անգամ դէպ եղեւ, զի զեկոյց»):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<i>ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱԲԵՐԻԱՅՈՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԿՂ</i> (Ս. Արևշատյան).....	7
Ա. ՅԱՂԱԳՍ ԹԷ ԶԻՆՉ Է ԱՇԽԱՐՀ.....	17
Բ. ՅԱՂԱԳՍ ԹԷ ՈՐՊԷՍ ՁԵԻ ՈՒՆԻՆ ԵՐԿԻՆՔ ԵՒ ԵՐԿԻՐ ԵՒ ԿԱՄ ՈՐՊԷՍ ԿԱՅ ԱՆՇԱՐԺԱՊԷՍ ԵՐԿԻՐՍ Ի ՄԻՋԻՆ ԿԷՏՆ ԵՐԿՆԻՅ.....	19
Գ. ՅԱՂԱԳՍ ----- ՈՐՔԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԿՆԻՅ ԵՒ ԴԱՍԱԻՈՐՈՒԹԵԱՆ ՆՈՅԻՆ ---	21
Դ. ՅԱՂԱԳՍ ԹԷ ԶԻՆՉ Է ԼՈՅՍ.....	27
Ե. ՅԱՂԱԳՍ ԹԷ ԶԻՆՉ Է ԺԱՄԱՆԱԿ	29
Զ. ՅԱՂԱԳՍ ԽԱԻԱՐՄԱՆ ԱՐԵԳԱԿԱՆ ԵՒ ԼՈՒՄՆԻ	32
Է. ՅԱՂԱԳՍ ԱՄՊՈՅ ԵՒ ՄԻԳԱՅ ԵՒ ՄԱՐԱԽԼԱՅ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԵՐԵԻՄԱՆՅՆ, ՈՐ ՅԵՐԿԻՆ	33
Ը. ՅԱՂԱԳՍ ՀՈՂՄՈՅ: ԴԱՐՁԵԱԼ ԻԻՐՈՅՆ ՏԵՂԵԱՅ ԵՒ ԱՅԼ ՄԱՍՆԱԻՈՐ ԻՐԱՅ ՊԻՏԱՆԱՅՈՒՅ	35
Թ. ՅԱՂԱԳՍ ԹԷ ԶԻՆՉ Է ԱՆՁՆ ՄԱՐԴՈՅ ԸՍՏ ՍԱՀՄԱՆԻՆ.....	37
Ժ. ՅԱՂԱԳՍ ԹԷ ԶԻՆՉ Է ՏՆԿԱԿԱՆ ՀՈԳԻՆ ԸՍՏ ՍԱՀՄԱՆԻ ԻԻՐՈՅ ԵՒ ԹԷ ՈՐՔԱՆ ԵՆ ԶՕՐՈՒԹԻՒՆՔ ՆՈՐԱ.....	38
ԺԱ. ՅԱՂԱԳՍ ԹԷ ԶԻՆՉ Է ԶԳԱՅԱԿԱՆ ՀՈԳԻՆ ԸՍՏ ՍԱՀՄԱՆԻՆ ԵՒ ԹԷ ՈՐՔ ԵՆ ԶՕՐՈՒԹԻՒՆՔ ՆՈՐԱ.....	39
ԺԲ. ՅԱՂԱԳՍ ՍԱՀՄԱՆԻ ԲԱՆԱԿԱՆ ՀՈԳԻՈՅՆ ԵՒ ՈՐՔԱՆՈՒԹԵԱՆՅ ԶՕՐՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ.....	44
ԺԳ. ՅԱՂԱԳՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՈՒԹԵԱՆՅ ՀՈԳԻՈՅՆ, ՈՐՔ ԵՆ ՈՐԱԿՈՒԹԻՒՆՔ ՆՈՐԻՆ.....	46
<i>ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....</i>	49

САРГИС БАРИАЦИ
О МИРЕ И ОБ ИНЫХ ЧАСТНЫХ ВЕЩАХ
(Публикация С. С. Аревшатяна)

SARGIS BERIATSI
ABOUT THE UNIVERSE AND THE OTHER
THING PECULIAR
(Publication by S. S. Arevshatyan)

Համակարգչային շարվածքը և էջադրումը Ա. Խանգադյանի

Պատվեր
Հրատարակչություն

Տպագրման 300